



Մրցակցության
պաշտպանության հանձնաժողով

**ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիգրան մեծի 4

Հեռ. (060) 830 840

Էլ. փոստ՝ info@competition.am

Էլ. կայք՝ www.competition.am

ԵՐԵՎԱՆ 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
ԳԼՈՒԽ 2. ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	9
ԳԼՈՒԽ 3. ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ	28
ԳԼՈՒԽ 4. «ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ.....	30
4.1 ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	30
4.2 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԾՔԸ	43
4.3 ԻՐԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	48
4.4 ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ.....	52
4.5 ՓՈԽԱՐԺԵՔԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՎՐԱ.....	62
ԳԼՈՒԽ 5. ՀՀ-ՈՒՄ ՍԵՎ ՄԵՏԱՂԻ ԶԱՐԴՈՆԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԿԻՍԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ	66
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	75

ՆԱԽԱԲԱՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**), տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի վնասման հնարավոր դեպքերը պարզելու, ՀՀ-ում բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու նպատակով պարբերաբար իրականացնում է ոլորտային ուսումնասիրություններ, որոնց միջոցով հսկողություն է իրականացվում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման համար շինարարության ոլորտի կարևորությունը¹ և վերջինիս ունեցած բազմարկչային (մուլտիպլիկատիվ) ազդեցությունը այլ ոլորտների վրա, Հանձնաժողովի կողմից առանձնացվել են շինարարության ոլորտում օգտագործվող հիմնական արտադրատեսակները: Ելնելով շինարարության մեջ օգտագործման համեմատաբար խոշոր ծավալներից և ոլորտում հնարավոր խնդիրների առկայության առնչությամբ ստացված ազդականներից՝ Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 29-ի «Ամրանների շրջանառության ոլորտի ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ» թիվ 117-Ա որոշման հիման վրա ուսումնասիրություն (այսուհետ նաև՝ **Ուսումնասիրություն**) է իրականացրել ամրանների շրջանառության ոլորտում (այսուհետ նաև՝ **Ոլորտ**):

Ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրները

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը համապատասխան տեղեկատվություն է ստացել Պետական եկամուտների կոմիտեից, Էկոնոմիկայի նախարարությունից և Ոլորտում գործող (ներմուծող, արտադրող, իրացնող) համեմատաբար խոշոր տնտեսավարող սուբյեկտներից:

Ուսումնասիրության հիմնական ուղղություններն են՝

➤ Ամրանների շրջանառության ոլորտը կարգավորող իրավական ակտերի, պետական և միջպետական տեխնիկական կանոնակարգերի, պահանջների և ստանդարտների ուսումնասիրություն, մրցակցային միջավայրի վրա դրանց ունեցած հնարավոր ազդեցության գնահատում,

➤ Ոլորտում ապրանքային շուկայի և դրա ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանների հատկորոշում,

¹ Շինարարության ոլորտը 2022 թվականին զբաղեցրել է ՀՆԱ շուրջ 7 և զբաղվածության՝ շուրջ 8.5 տոկոսը:

➤ Ապրանքային շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների կազմի և կառուցվածքի ուսումնասիրություն, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի գնահատում,

➤ Ինչպես ներմուծման, այնպես էլ արտադրության դեպքում ամրանների իրացման ինքնարժեքը ձևավորող ծախսային բաղադրիչների ուսումնասիրություն,

➤ Ոլորտում առկա հնարավոր խնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված առաջարկների մշակում:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի (այսուհետ նաև՝ **Դիտարկվող ժամանակահատված**) տվյալների հիման վրա:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը համագործակցել է նաև «Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնի հետ:

ԳԼՈՒԽ 1. ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ամրանների ընդհանուր բնութագիրը և կիրառումը. Շինարարության ոլորտում օգտագործվող ամրանները պողպատյա ձողեր, պողպատյա թելեր և պարաններ են, որոնք օգտագործվում են մետաղաբետոնային կոնստրուկցիաներում և ունեն արտաքին ծանրությանը դիմակայող առաձգականություն: Դրանք բետոնե կոնստրուկցիաներին հաղորդում են հավելյալ աջակցություն և դիմադրություն ընդդեմ ճկման, ճեղքման և կոտրվելուն: Շինարարության մեջ օգտագործվող ամրանները պատրաստվում են ածխածնային պողպատից և լինում են տարբեր չափերի, ձևերի և դասերի: Ամրանները կարող են ունենալ հարթ կամ ծալքավոր մակերես:

Ամրանների տեսակները. Երկաթբետոնե կոնստրուկցիաներում օգտագործվող ամրանները սովորաբար բաժանվում են չորս տեսակի.

1) աշխատանքային (ընդունում է արտաքին բեռների և երկաթբետոնի քաշի առաձգական և կտրող լարումը),

2) բաշխող (պահում է ամրացնող ձողերը որոշակի դիրքում և բաշխում է ծանրությունը այդ ձողերի միջև),

3) սեղմիչ (ամրանը կապվում է ամբողջական կարկասի մեջ, ինչպես նաև պաշտպանում է բետոնը ճաքերից, որոնք կարող են առաջանալ հենարանների շուրջ),

4) մոնտաժային (օգտագործվում է ամրանային շրջանակի հավաքման ժամանակ, ապահովում է աշխատանքային ամրանի և սեղմիչ ամրանի անհրաժեշտ դիրքը բետոնապատման ժամանակ):

Ամրանները կարող են տեղադրվել առանձին կամ կազմել ամրանային ցանցեր, կարկասներ և կոնստրուկցիաներ:

Ելնելով արտադրված ամրանների նյութատեսակից և շինարարության մեջ դրանց կիրառման նպատակներից՝ հիմնականում առանձնացվում է ամրանների 2 տեսակ՝ **մետաղական** (պողպատյա) և **ոչ մետաղական** (պլաստիկ, կոմպոզիտային): Ամրանների առանձին տեսակների բնութագրերը և առանձնահատկություններն առավել մանրամասն ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Ամրանների տեսակները և հիմնական բնութագրերը

Հ/հ	Ամրանի տեսակ		Նյութական կազմություն	Օգտագործում	Առանձնահատկություններ
1	Պողպատյա ամրաններ	Հարթ ամրաններ	Պատրաստվում են խառնուրդային պողպատից՝ սովորաբար վառման կամ գլորման մեթոդներով:	Կիրառվում են որպես բետոնե կառուցվածքների ուժեղացման հիմնական միջոց՝ ներառյալ շենքերի հիմքերը, պատերը և առաստաղները:	Ունեն հարթ մակերես, որը նվազեցնում է ամրանների և բետոնի շփման մակերեսը, ինչի արդյունքում ապահովվում է բետոնի հարթեցված դրվածքը և ամրանների ճիշտ տեղադրումը:
		Ծալքավոր ամրաններ	Պատրաստվում են բարձրորակ պողպատից՝ ծալքավոր մակերեսով:	Օգտագործվում են բետոնե կառուցվածքների ամրապնդման ժամանակ, որտեղ անհրաժեշտ է ապահովել ավելի բարձր ճնշումային և ձգման դիմադրություն, օրինակ՝ կամուրջների, ճանապարհների և բազմաբնակարան շենքերի կառուցման ժամանակ:	Ծալքավոր մակերեսը մեծացնում է շփման մակերեսը բետոնի հետ, ինչը ապահովում է ավելի ուժեղ կապ և բարձր դիմադրություն լարվածություններին:
		Տաք գլորած ամրաններ	Պատրաստվում են տաք պողպատից, որը գլորում են մինչև ցանկալի չափսերի և ձևերի:	Օգտագործվում են որպես կառուցվածքային տարրեր բարձր ճնշման պայմաններում, ներառյալ բարձրահարկ շենքերի, մեծ կամուրջների և արդյունաբերական շինությունների կառուցման ժամանակ:	Տաք գլորած պողպատը ապահովում է բարձր ամրություն, դիմադրություն ճնշումների և ձգման նկատմամբ, ինչը հնարավորություն է տալիս կառուցվածքին դիմակայել ծանրաբեռնվածություններին:
		Սառեցված ամրաններ	Պատրաստվում են բարձր լարվածության պողպատից, որը մշակված է սառեցման միջոցով:	Օգտագործվում են նախաձեռնական գնդակաձև կառուցվածքներում, ինչպիսիք են՝ նախապես ձգված կամ թրթռոցով ամրացված բետոնե կառուցվածքները:	Սառեցված պողպատը ապահովում է բարձր լարվածության դիմադրություն, ինչը թույլ է տալիս կառուցվածքին դիմակայել բարձր լարվածություններին առանց ճաքերի կամ դեֆորմացիայի:
2	Պլաստիկ ամրաններ		Պատրաստվում են պոլիմերային նյութերից, ինչպիսիք են՝ պոլիէթիլենը, պոլիպրոպիլենը և պոլիամիդը:	Օգտագործվում են քիմիական արդյունաբերության շինարարական կառույցներում, ծովային կառույցներում և այն միջավայրերում, որտեղ պահանջվում է բարձր կոռոզիոն դիմացկունություն:	Պլաստիկ ամրաններն ունեն փոքր քաշ, բարձր կոռոզիոն դիմացկունություն և մագնիսական դաշտերի նկատմամբ չեզոքություն, ինչը ապահովում է դրանց երկարատևությունը և արդյունավետությունը:
3	Կոմպոզիտային ամրաններ		Պատրաստվում են կոմպոզիտային նյութերից, ինչպիսիք են՝ ապակե մանրաթելը կամ ածխածնային մանրաթելը:	Օգտագործվում են այն միջավայրերում, որտեղ պահանջվում է բարձր ձգման և ճնշման դիմադրություն, բայց անհրաժեշտ է նաև փոքր քաշ, օրինակ՝ ավիացիայի, նավաշինության և բարձր տեխնոլոգիաների շինարարական նախագծերում:	Կոմպոզիտային ամրաններն ունեն բարձր ամրություն, փոքր քաշ և բարձր դիմադրություն կոռոզիայի նկատմամբ, ինչը հնարավորություն է տալիս դրանց կիրառմանը ծանրաբեռնված միջավայրերում առանց վնասվելու:

Ամրանների չափերը. Շինարարական աշխատանքների համար օգտագործվող ամրանների չափերը կախված են նախագծի կոնկրետ կիրառությունից և պահանջներից: Դրանց ամենատարածված չափերն են.

1. 6 մմ տրամագծով պողպատե ձող,
2. 8 մմ տրամագծով պողպատե ձող,
3. 10 մմ տրամագծով պողպատե ձող,
4. 12 մմ տրամագծով պողպատե ձող,
5. 16 մմ տրամագծով պողպատե ձող,
6. 20 մմ տրամագծով պողպատե ձող,
7. 25 մմ տրամագծով պողպատե ձող:

Ամրանների արտադրությունը. Ամրանների արտադրության 3 տեխնոլոգիա է առանձնացվում՝ կորզանում, գլանում և ձևախախտում (դեֆորմացիա):


1. **Կորզանում.** այս եղանակով են արտադրվում մինչև 6 մմ տրամագծով հարթ ամրանները: Այս դեպքում պատրաստուքները մեկը մյուսի ետևից ձգվում են նախապես սահմանված տրամագծի ֆիլտրերի միջով: Սարքավորումը համարվում է բավական էներգատար, ինչպես նաև սարքավորման մեծ չափերի պատճառով պահանջվում է մեծ տարածքի առկայություն: Այնուհետև տեղի է ունենում քիմիական և ջերմային մեթոդով մշակում, որպեսզի վերջնական արտադրանքն ունենա անհրաժեշտ կարծրությունը:

2. **Գլանում.** այս եղանակը ժամանակակից արտադրական ընկերությունների շրջանում համարվում է ամենաարդյունավետը: Հիմնական առավելություններից է քիչ էներգատար լինելը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս դեպքում նվազագույնի է հասցվում շփումը: Ինքնին գործընթացը պարզեցված է. սարքավորումը երկար է ծառայում, արտադրության ընթացքում քսանյութեր չեն պահանջվում, գերձգման վեկտորը բացակայում է: Վերջին հանգամանքով էլ պայմանավորված է այն, որ գլանման եղանակով արտադրության ընթացքում մետաղի պատռվածք կամ նոսրացում տեղի չի ունենում:

3. **Ձևախախտումը** լայնորեն տարածված է պողպատյա ամրանների ամենատարածված՝ 4-12 մմ տրամագիծ ունեցող տեսակների արտադրության ժամանակ: Արդյունքում ստացվում են հարթ, ծալքավոր մակերեսով մետաղական պրոֆիլներ:

Պողպատյա ամրանների արտադրության հիմնական հումքը **պողպատյա հանքաքարն է, ածուխը, մանգանի հանքաքարը և դոլոմիտը:** Ամրանների արտադրության տեխնոլոգիական ցիկլը առավել մանրամասն ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Ամրանների արտադրության տեխնոլոգիական ցիկլը



ԳԼՈՒԽ 2. ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում ամրանների շրջանառության ոլորտին առնչվող իրավակարգավորումներն առավելապես վերաբերում են բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքների (մետաղական ամրանների) անվտանգությունը բնութագրող ցուցանիշներին, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, փոխադրմանը, պահմանը ներկայացվող պահանջներին, համապատասխանության գնահատման ընթացակարգերին, արտադրանքի հետ կապված գործընթացներին, ինչպես նաև, ի թիվս այլնի, ոչ մետաղական կոմպոզիտային ամրաններին ներկայացվող տեխնիկական պահանջներին, մասնավորապես՝ ձևի, չափերի և փաստաթղթերի նկատմամբ կիրառվող պահանջներին, հիմնական բնութագրերին ներկայացվող պահանջներին, փոխադրման և պահպանման կարգին, ոչ մետաղական ամրանի մատակարարման, ընդունման և որակի հսկման կանոններին և բետոնե կոնստրուկցիաներում ոչ մետաղական ամրանների կիրառման առանձնահատկություններին:

Այս համատեքստում անդրադառնանք Ոլորտը կարգավորող իրավական ակտերին: Մասնավորապես, Ոլորտը կարգավորող ներպետական իրավական ակտերն են.

1. Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Մաքսային գործի իրականացման նպատակներով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման համար օգտագործվող՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը հաստատելու մասին» թիվ 1406-Ն որոշումը (այսուհետ նաև՝ **Կառավարության թիվ 1406-Ն որոշում**).

2. Կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի ««Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողնման համար թույլատրվող ապրանքների ցանկը սահմանելու մասին» թիվ 1359-Ն որոշումը (այսուհետ նաև՝ **Կառավարության թիվ 1359-Ն որոշում**).

3. Կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 607-Ն որոշումը (այսուհետ նաև՝ **Կառավարության թիվ 607-Ն որոշում**).

4. Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 18-ի «ՀՀԿՀ 52-101-2022 «Շինարարական բետոնե և գետտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին»» թիվ 45-Ա հրամանը (այսուհետ նաև՝ **Քաղաքաշինության կոմիտեի նախագահի թիվ 45-Ա հրաման**):

Անդրադառնալով Ոլորտը կարգավորող Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ **ԵԱՏՄ**) իրավական ակտերին՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը հաստատելու, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշ որոշումներ փոփոխելու և ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 80 որոշումը (այսուհետ նաև՝ **ԵՏՀԽ թիվ 80 որոշում**).

2. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի «Այն զգայուն ապրանքների ցանկի մասին, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ որոշումն ընդունվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից» թիվ 16 որոշումը (այսուհետ նաև՝ **ԵՏԲԽ թիվ 16 որոշում**):

Միևնույն ժամանակ գոյություն ունեն մի շարք միջազգային, ինչպես նաև ԳՕՍՍ ստանդարտներ, որոնք, ի թիվս այլնի, սահմանում են մետաղական ամրաններին ներկայացվող տեխնիկական պահանջները, դրանց քիմիական բաղադրությունը, որակական չափանիշները, մետաղական ամրանների ստուգման մեթոդները և նյութերի բնութագրերը:

Միջազգային ստանդարտների (այսուհետ նաև՝ **ISO ստանդարտներ**) շարքին են դասվում հետևյալները.

1. ISO 6935-1 - Steel for the reinforcement of concrete - Part 1: Plain bars
2. ISO 6935-2 - Steel for the reinforcement of concrete - Part 2: Ribbed bars
3. ISO 6935-3 - Steel for the reinforcement of concrete - Part 3: Welded fabric

ISO ստանդարտների պահանջների պահպանմամբ երաշխավորվում են որակյալ մետաղական ամրանների արտադրությունը և կիրառման արդյունավետությունը, որպիսի պայմաններում ապահովվում են բետոնային կառույցների ամրությունը և դիմադրությունը:

Մետաղական ամրաններին առնչվող ԳՕՍՍ ստանդարտները (ԳՕՍՍ 5781-82, ԳՕՍՍ 10884-94, ԳՕՍՍ 10884-94, ԳՕՍՍ 7565-81, ԳՕՍՍ 380-2005, ԳՕՍՍ 52544-2006 և այլն) հիմնականում սահմանում են երկաթբետոնային

կոնստրուկցիաներում կիրառվող մետաղական ամրաններին ներկայացվող պահանջները և մեխանիկական հատկությունները: Մինչև նույն ժամանակ, Կառավարության թիվ 607-Ն որոշմամբ ներկայացված է նույն որոշմամբ սահմանված պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ամբողջական ցանկը:

Գոյություն ունեն նաև այլ ԳՕՍՍ ստանդարտներ, որոնք օգտագործվում են որոշակի հատուկ պայմանների կամ մետաղական ամրանների տեսակների համար: Դրանք են՝ ԳՕՍՍ 6727-80, ԳՕՍՍ 10884-2014, ԳՕՍՍ 10885-85, ԳՕՍՍ 14637-89, ԳՕՍՍ 30136-95:

2.1. Մեքաղական ամրաններին առնչվող հիմնական իրավակարգավորումները Հայաստանի Հանրապետությունում.

Կառավարության թիվ 1406-Ն որոշմամբ հաստատվել է մաքսային գործի իրականացման նպատակներով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման համար օգտագործվող՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը, իսկ ԵՏՀԽ թիվ 80 որոշմամբ՝ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը և ԵԱՏՄ միասնական մաքսային սակագները (այսուհետ նաև՝ **Ապրանքների ցանկ կամ Ապրանքների մաքսային սակագների ցանկ**):

Ապրանքների ցանկում ընդգրկված են ԱՏԳ ԱԱ 7214 ծածկագրի (ծողեր՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից, առանց հետագա մշակման, կոումից, տաք գլոցումից, տաք կորզանումից կամ տաք արտամղումից բացի՝ ներառյալ գլանումից հետո ոլորված ծողերը, այլ.) մեջ ներառված Ոլորտին առնչվող հետևյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով ապրանքները.

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը
7214 99	- - այլ՝
	- - - 0,25% զանգվածային բաժնից պակաս ածխածին պարունակող՝
7214 99 100 0	- - - - բետոնի ամրանավորման համար օգտագործվող
	- - - - այլ՝ հետևյալ տրամագծով կլոր հատմամբ՝
7214 99 310 0	- - - - - 80 մմ կամ ավելի
7214 99 390 0	- - - - - 80 մմ-ից պակաս

7214 99 500 0	- - - - այլ
	- - - 0,25% զանգվածային բաժին կամ ավելի ածխածին պարունակող՝
	- - - - կլոր հատմամբ, տրամագծով՝
7214 99 710 0	- - - - 80 մմ կամ ավելի
7214 99 790 0	- - - - 80 մմ-ից պակաս
7214 99 950 0	- - - - այլ

Հայաստանի Հանրապետությունում մետաղական ամրաններին (պողպատե արտադրանք) ներկայացվող պահանջները կանոնակարգող հիմնական կիրառելի իրավական ակտը Կառավարության թիվ 607-Ն որոշումն է:

Կառավարության թիվ 607-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի (այսուհետ նաև՝ **Տեխնիկական կանոնակարգ**) 1-ին կետի համաձայն՝ բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին (այսուհետ նաև՝ **մետաղական ամրան**) ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի նպատակն է մարդու կյանքի, առողջության վրա բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքների ազդեցության ռիսկի աստիճանի գնահատումը և անվտանգության ապահովումը:

Տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է, ի թիվս այլնի (ամրալար, մետաղալար)՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերին համապատասխան հետևյալ պողպատե արտադրանքների վրա՝ **ամրանային ձողեր՝ բետոնի ամրանավորման համար օգտագործվող, ածխածնային պողպատից, շիկազլոցված՝ 7214 99-ից:**

Տեխնիկական կանոնակարգի 2-րդ կետի համաձայն՝ Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են նույն կանոնակարգի 1-ին կետով նախատեսված բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, փոխադրմանը, պահմանը ներկայացվող պահանջները, համապատասխանության գնահատման ընթացակարգերը, ինչպես նաև արտադրանքի հետ կապված գործընթացները:

Տեխնիկական կանոնակարգի 3-րդ կետի համաձայն՝ պողպատե արտադրանքները, այդ թվում՝ ամրանային ձողերը, ենթակա են **համապատասխանության պարտադիր գնահատման:**

Տեխնիկական կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով տրված է ամրանային ձողի սահմանումը, այն է՝ ***ուղղաձիգ ձողերի տեսքով մաքակարարվող հարթ կամ պարբերական տրամադրի ամրանային պողպատ:***

Շրջանառության դուրսբերման կանոնները.

Տեխնիկական կանոնակարգի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա պողպատե արտադրանքների շրջանառության մեջ դնելն առանց համապատասխանության գնահատման փաստաթղթի առկայության:

Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա և շրջանառության մեջ գտնվող պողպատե արտադրանքները պետք է ուղեկցվեն միաժամանակ.

- հայերեն մակնշմամբ,
- համապատասխանության ազգային նշանի մակնշմամբ,
- համապատասխանության սերտիֆիկատով:

Վերոգրյալից հետևում է, որ մետաղական ամրանները՝ որպես պողպատե արտադրանք, ենթակա են համապատասխանության գնահատման և կարող են շրջանառության մեջ դրվել բացառապես համապատասխանության գնահատման փաստաթղթի առկայության պայմաններում:

Նշյալ պայմանների բացակայության դեպքում արգելվում է մետաղական ամրանների շրջանառությունը:

Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միության իրավակարգավորումների շրջանակներում մետաղական ամրանների շրջանառության դուրսբերման այլ կանոններ առկա չեն, ապա պարտադիր համապատասխանության գնահատման պահանջը հավասարապես վերաբերելի է նաև Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մետաղական ամրաններին:

Մետաղական ամրաններին ներկայացվող պահանջները.

Անդրադառնալով մետաղական ամրաններին ներկայացվող պահանջներին, հարկ է նշել, որ Տեխնիկական կանոնակարգի 7-28-րդ կետերով սահմանված են մետաղական ամրանների մեխանիկական ցուցանիշները, քիմիական տարրերի զանգվածային մասերը և այլն:

Մասնավորապես, սահմանվում են.

- ամրանային պողպատի յուրաքանչյուր դասի համար ամրանային ձողերի մեխանիկական ցուցանիշները՝ էլեկտրատաքացման ջերմաստիճանին, հոսունության պայմանական սահմանին, խզման ժամանակավոր դիմադրությանը, հարաբերական երկարացմանը, սառը վիճակում ծռման անկյանը, աստիճանին և

ծողի անվանական տրամագծին (կալակ) ներկայացվող պահանջները: Մասնավորապես, մեխանիկական փորձարկումների արդյունքները պետք է լինեն ոչ պակաս Տեխնիկական կանոնակարգի N 1 աղյուսակով սահմանված արժեքներից, ընդ որում կալակի տրամագիծը որոշվում է միջպետական ԳՕՍՏ 14019-2003 ստանդարտով, էլեկտրատաքացումը կատարում է արտադրողը արտադրության պրոցեսում՝ համաձայն ԳՕՍՏ 34028-2016 ստանդարտի:

- պատրաստի ամրանային ծողերում քիմիական տարրերի զանգվածային մասերին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ դրանք պետք է համապատասխանեն Տեխնիկական կանոնակարգի N2 աղյուսակով սահմանված արժեքներին:

- ամրանի տրամաչափի, կտրվածքի մակերեսի, հարթ և պարբերական պրոֆիլի ամրանային պողպատի 1 մ երկարության քաշի, ինչպես նաև պարբերական պրոֆիլների համար քաշի թույլատրելի շեղումների ցուցանիշները՝ N 8 աղյուսակին համապատասխան:

Մակնշմանը ներկայացվող պահանջները.

Մետաղական ամրանների մակնշմանը ներկայացվող պահանջներին են ուղղված Տեխնիկական կանոնակարգի 29-31-րդ կետերով սահմանված կարգավորումները:

Համաձայն նշված դրույթներում առկա իրավակարգավորումների՝ յուրաքանչյուր ամրանային ծող պետք է ունենա արտադրող կազմակերպության անվանումը և ամրանի մակնիշը, գլոցվածքային մակնշում՝ ոչ ավելի քան 1,8 մետր հեռավորությամբ:

Պիտակը պետք է պարունակի հստակ, պարզ և դյուրընթեռնելի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) արտադրող կազմակերպության անվանումը և ապրանքային նշանը (առկայության դեպքում).

2) ամրանային պողպատի դասը, որից պատրաստվել է արտադրանքը, մակնիշը, տրամագիծը.

3) արտադրման տարեթիվը, ամիսը.

4) խմբաքանակի համարը, զանգվածը.

5) համապատասխանության հավաստման վերաբերյալ տեղեկատվությունը:

Ավելին, կապերով և կաժերով փաթեթավորված մետաղական ամրանների վրա ամրացվում է 1 պիտակ, իսկ արտադրողի և սպառողի փոխհամաձայնության դեպքում կապերով փաթեթավորված մետաղական ամրանների վրա՝ 2 պիտակ:

Փաթեթավորմանը, փոխադրմանը և պահմանը ներկայացվող պահանջները.

Տեխնիկական կանոնակարգի 32-րդ կետի համաձայն՝ պողպատե արտադրանքները փաթեթավորվում են կապերի կամ կաժերի ձևով՝ ամրացնելով մետաղալարով կամ լարով կամ մետաղյա ժապավեններով, որոնք կապահովեն պողպատե արտադրանքների պահպանվածությունը՝ դրանց պահման կամ փոխադրման ժամանակ:

Տեխնիկական կանոնակարգի 33-38-րդ կետերով սահմանված են նաև կապերով կամ կաժերով փաթեթավորված մետաղական ամրանների համար փաթեթվածքի առավելագույն զանգվածը, խմբաքանակի առավելագույն զանգվածը, ինչպես նաև կաժերով փաթեթավորված մետաղական ամրանների ամրացման ձևի, պահման և դարսման պահանջները:

Համապատասխանության գնահատման ընթացակարգերը.

Ինչպես վերը նշել ենք, Տեխնիկական կանոնակարգի 3-րդ կետի համաձայն՝ մետաղական ամրանները ենթակա են համապատասխանության պարտադիր գնահատման:

Տեխնիկական կանոնակարգի 43-րդ կետի համաձայն՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին պողպատե արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար համապատասխանության գնահատման նշանակված մարմինը՝

1) պետք է կիրառի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման ընթացակարգերը խմբաքանակի կամ սերիական արտադրության համար.

2) սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանության դեպքում և գնահատման արդյունքում տրամադրում է արտադրողին կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցչին Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ սահմանված համապատասխանության ազգային նշանը՝ թույլատրելու պողպատե արտադրանքի փաթեթի կամ պիտակի վրա դրոշմումը (տե՛ս **Պատկեր 1-ը**):

Պատկեր 1



Ուստի, անդրադառնալով համապատասխանության գնահատում իրականացնելու հայտ ներկայացնող սուբյեկտներին, հարկ է նկատել, որ սերիական արտադրության համար Կառավարության 2014 թվականի հունվարի

16-ի թիվ 56-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերն (Թ5 և Թ6) իրականացնելու նպատակով հայտ ներկայացնողը արտադրողն է կամ նրա լիազոր ներկայացուցիչը:

Միևնույն ժամանակ, Ժ ընթացակարգով սերտիֆիկացման դեպքում (արտադրանքի խմբաքանակի համար) հայտատուն արտադրողն է (արտադրողի կողմից լիազորված անձը) կամ վաճառողը (ներմուծողը):

«Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված դեպքերում, իրականացնում են համապատասխանության գնահատման համար նշանակված մարմինները:

Համապատասխանության գնահատման մարմինը նշանակվում է համակարգող մարմնի կողմից՝ Կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը, չափանիշները և դեպքերը հաստատելու մասին» թիվ 623-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով և չափանիշներով:

Հաշվի առնելով վերոգրյալը, հարկ է նշել, որ համապատասխանության գնահատում իրականացնող մարմինների ցանկը հասանելի է Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում, որտեղ զետեղված են համապատասխանության գնահատում իրականացնող մարմինների վկայականները և Էկոնոմիկայի նախարարի հրամանները, նրանց՝ որպես համապատասխանության գնահատում իրականացնող մարմին նշանակելու վերաբերյալ:²

Ընդ որում, ինչ վերաբերում է մետաղական ամրաններին, ապա Էկոնոմիկայի նախարարի 28.11.2024 թվականի թիվ 2853-Ա որոշմամբ Փ. Աբաջյան ՍՊԸ-ին վերապահվել է որպես Տեխնիկական կանոնակարգի պահանջների համաձայն համապատասխանության գնահատում իրականացնելու հնարավորություն:

Էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ ազգային տեխնիկական կանոնակարգերին համապատասխան տրված համապատասխանության սերտիֆիկատների և գրանցված համապատասխանության հայտարարագրերի ռեեստրներում 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը և 2024 թվականի հունվարի 1-ից մինչև օրս չեն գրանցվել Կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի թիվ 607-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգին համապատասխանության սերտիֆիկատներ և հայտարարագրեր, իսկ վերոնշյալ

² Տե՛ս <https://mineconomy.am/page/401> :

սեփնիկական կանոնակարգով հավատարմագրված են «Փ. Աբաջյան» ՍՊԸ-ի արտադրանքի սերտիֆիկացման մարմինը և «Փ. Աբաջյան» ՍՊԸ-ի, «ՀՈՐԻԶՈՆ-95» ՍՊԸ-ի, «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի և «ՍԻ-ԼԱԲ» ՍՊԸ-ի փորձարկման լաբորատորիաները:

Վերոնշյալից հետևում է, որ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատում իրականացնող մարմին նշանակված չի եղել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև Էկոնոմիկայի նախարարի 28.11.2024 թվականի թիվ 2853-Ա որոշումն ուժի մեջ մտնելը:

Միևնույն ժամանակ, Տեխնիկական կանոնակարգի 44-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է, որ սերտիֆիկացում իրականացնող համապատասխանության գնահատման նշանակված մարմինը փորձարկումների կատարումն ապահովելու նպատակով, պողպատե արտադրանքի նմուշառումն իրականացնում է հայտատուի մասնակցությամբ:

Տեխնիկական կանոնակարգի 45-րդ և 46-րդ կետերի համաձայն՝ պողպատե արտադրանքի նույնականացման գործընթացում ստուգվում է անմիջապես դրանց փաթեթվածքի վրա կամ դրանց փակցված կամ ներդիր պիտակների վրա կատարված մակնշվածքի համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթում ներկայացված տեղեկատվությանը:

Ընդ որում, փորձարկումները պետք է կատարվեն Տեխնիկական կանոնակարգի կիրառումն ապահովող ստանդարտներին համապատասխան: Վերջիններս թվարկված են Տեխնիկական կանոնակարգի 11-րդ գլխում:

Տեխնիկական կանոնակարգի 47-րդ կետի համաձայն՝ սերիական արտադրանքի համար համապատասխանության գնահատման նշանակված մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատը հանձնելու ժամանակ վերջինիս հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատ տալու պայմանների պահպանման նկատմամբ իրականացվող հսկողության պայմանագիր, (...):

Ինչ վերաբերում է սերտիֆիկատի գործողության ժամկետին, ապա Տեխնիկական կանոնակարգի 48-րդ կետի համաձայն՝ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետի ընտրությունը պետք է կատարվի ըստ իրականացված համապատասխանության գնահատման ընթացակարգի՝ սերիական արտադրանքի համար՝ առավելագույնը 5 տարի ժամկետով, իսկ խմբաքանակի համար՝ առավելագույնը 1 տարի ժամկետով:

Համապատասխանության գնահատումը մեկանգամյա գործընթաց չէ, հետևաբար, Տեխնիկական կանոնակարգի 49-րդ կետը սահմանում է, որ պողպատե արտադրանքի սերիական սերտիֆիկացման դեպքում պարբերական գնահատումն իրականացվում է համապատասխանության սերտիֆիկատի

գործողության ժամկետի ընթացքում՝ առնվազն տարեկան մեկ անգամ՝ սույն կանոնակարգի 47-րդ կետում նշված պայմանագրի հիման վրա:

Տեխնիկական կանոնակարգով նաև կարգավորվում են համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման ընթացակարգերը, ինչպես նաև սահմանվում են սերտիֆիկատի կասեցման կամ դադարեցման դեպքում մետաղական ամրան արտադրող կազմակերպության պարտականությունները:

Մասնավորապես.

- Տեխնիկական կանոնակարգի 51-րդ կետի համաձայն՝ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում սերտիֆիկացում իրականացրած համապատասխանության գնահատման նշանակված մարմինը 5-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է հայտատուին և գրավոր ծանուցում ստուգումներ իրականացնող իրավասու մարմիններին (անմիջականորեն կամ պատվիրված փոստային առաքմամբ՝ ներդրի մասին վերգրությամբ և հանձնման մասին ծանուցմամբ տեղեկատվություն ուղարկելու միջոցով):

- Տեխնիկական կանոնակարգի 52-րդ կետի համաձայն՝ սերտիֆիկատի գործողության կասեցման ծանուցումը ստանալուց հետո հայտատուն կասեցման համար սահմանված ժամկետում պարտավոր է վերացնել արձանագրված թերությունները կամ անհամապատասխանությունները:

- Տեխնիկական կանոնակարգի 53-րդ կետի համաձայն՝ սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման ծանուցումը ստանալուց հետո հայտատուն 10-օրյա ժամկետում պետք է ապահովի տվյալ արտադրանքի շուկայից հետկանչում:

- Տեխնիկական կանոնակարգի 54-րդ կետի համաձայն՝ սույն տեխնիկական կանոնակարգի 52-րդ կետում նշված գործողություններից հետո համապատասխանության գնահատման նշանակված մարմինը պարբերական գնահատման համար կնքում է նոր պայմանագիր, որտեղ պարբերական հսկողության ժամկետ է նշանակում պայմանագրում նշված ժամկետից առնվազն 2 անգամ ավելի հաճախ պարբերականությամբ: Սերտիֆիկատի գործողության ժամկետը կասեցման դեպքում շարունակվում է: Եթե հայտնաբերված թերությունները նշված ժամանակահատվածից շուտ են վերացվում, ապա կասեցման վերացման ավարտ է համարվում թերությունները վերացնելու ժամկետը:

Չափումների միասնականության ապահովումը.

Մետաղական ամրանների չափումների միասնականությունը պետք է ապահովվի «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով

սահմանված կարգով, իսկ մետաղական ամրանների Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացվում է «Տեխնիկական կանոնակարգման մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքներով սահմանված կարգով և այլ իրավական ակտերով:

Մասնավորապես, «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 28.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացնում է Կառավարության լիազորած մարմինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերահսկողություն իրականացնող մարմնի կարգադրագրի ձևը հաստատում է վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարը:

Մինևույն ժամանակ, «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 28.2-րդ հոդվածի 2-րդ մասը հղում է պարունակում վերահսկողություն իրականացնող մարմնի կարգադրագրի ձևին, որը հաստատում է Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարը:

Վերոշարադրյալից հետևում է, որ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացնում է Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:

Մինևույն ժամանակ, Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացնում է Կառավարության 2019 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային արտադրանքների և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 730-Ն որոշմամբ սահմանված ստուգաթերթին և հարցաշարին համապատասխան: Ընդ որում, Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացվում է ԱՏԳ ԱԱ 7214 99-ից, 7213 91 100 0, 7213 99-ից, 7217 10-ից, 7312 10-ից ծածկագրերին համապատասխան արտադրանքների նկատմամբ:

2.2. Համապատասխանության գնահատման միջազգային փորձը.

Համապատասխանության գնահատումը տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանության հավաստման գործընթաց է, որն ուղեկցվում է համապատասխանության սերտիֆիկատի տրամադրմամբ:

Ուսումնասիրելով սերտիֆիկացման գործընթացի միջազգային փորձը՝ հարկ է նշել հետևյալը.

Բելառուսի Հանրապետության «Շենքեր և շինություններ, շինանյութեր և անվտանգության միջոցներ» TP 2009/013/*BY³ տեխնիկական կանոնակարգի համաձայն՝ այն մետաղական ամրանները, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների կառուցման մեջ, ենթակա են համապատասխանության պարտադիր գնահատման:

Ռուսաստանի Դաշնության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների և համապատասխանության հայտարարագրման ենթակա ապրանքների միասնական ցուցակի հաստատման, Ռուսաստանի Դաշնության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 31-ի N 2467 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Ռուսաստանի Դաշնության կառավարության որոշ ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2425 որոշմամբ սահմանված են այն արտադրանքները, որոնք ենթակա են համապատասխանության պարտադիր գնահատման, մինչդեռ, ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրից սկսած մետաղական ամրաններն այդ ցանկում ներառված չեն, ինչից հետևում է, որ սույն ուսումնասիրության առարկա հանդիսացող ամրանները ենթակա չեն պարտադիր սերտիֆիկացման կամ հայտարարագրման:

Հետևաբար, ամրանների որոշ տեսակներ, օրինակ՝ մետաղյա ձողերի տեսքով ամրանները, ենթակա չեն պարտադիր սերտիֆիկացման կամ հայտարարագրման⁴:

Ինչ վերաբերում է ԳՕՍՍ ստանդարտների պահանջներին արտադրանքի համապատասխանությանը, հարկ է նշել, որ ներկայումս Ռուսաստանի Դաշնությունում ստանդարտացման ազգային համակարգի բարեփոխման և տեխնիկական կանոնակարգերի ներդրման հետ կապված, ԳՕՍՍ համակարգում պարտադիր սերտիֆիկացումը սկսել է երկրորդային դեր ունենալ⁵:

³ Տե՛ս <https://www.sertis.by/files/tr13i.pdf>

⁴ Տե՛ս <https://amurtest.ru/sertifikaciya-armatury-promyshlennoj>

⁵ Տե՛ս <https://www.rustandard.com/ru/sertifikat-sootvetstviya-gost-r/obyazatelny.html#:~:text=%D0%A1%D0%B5%D1%80%D1%82%D0%B8%D1%84%D0%B8%D0%BA%D0%B0%D1%82%20%D1%81%D0%BE%D0%BE%D1%82%D0%B2%D0%B5%D1%82%D1%81%D1%82%D0%B2%D0%B8%D1%8F%20%D0%93%D0%9E%D0%A1%D0%A2%20%D0%A0%20%E2%80%93%D0%BE%D1%84%D0%B8%D1%86%D0%B8%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D1%8B%D0%B9.%D0%B2%D1%80%D0%B5%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%20%D1%81%D0%B0%D0%BC%D0%BE%D0%B9%2>

Այն ապրանքների ցանկը, որոնց ԳՕՍՍ ստանդարտների պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատումն իրականացվում է պարտադիր սերտիֆիկացման ձևով, հաստատվել է Ռուսաստանի Դաշնության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 982 որոշմամբ:

Նշյալ որոշմամբ սահմանված են այն ապրանքները, որոնք ենթակա են ԳՕՍՍ ստանդարտների պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման մինչդեռ, ԱՏԳ ԱԱ 7214 99-ից սկսած մետաղական ամրանները տվյալ ցանկում ներառված չեն, ինչից հետևում է, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող ամրանները ԳՕՍՍ ստանդարտների պահանջներին համապատասխանության գնահատման ենթակա չեն:

Միևնույն ժամանակ, խոսելով համապատասխանության սերտիֆիկատի առանձնահատկությունների մասին, հարկ է արձանագրել, որ ԵԱՏՄ շրջանակներում թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ ԵԱՏՄ անդամ պետություններում համապատասխանության գնահատում անցած արտադրանքների համապատասխանության սերտիֆիկատն անդամ պետություններում ենթակա չէ ճանաչման, բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրանքն արտադրվել է ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան և սերտիֆիկացվել է ԵԱՏՄ միասնական սրտիֆիկատի ձևանմուշով⁶:

2.3. Ոչ մետաղական ամրաններին առնչվող իրավակարգավորումները.

Հայաստանի Հանրապետությունում ոչ մետաղական ամրաններին (ապակեպլաստ և բազալտեպլաստիկ) առնչվող կիրառելի հիմնական իրավական ակտը Քաղաքաշինության կոմիտեի նախագահի թիվ 45-Ա հրամանն է, որով հաստատվել են շինարարական բետոնե և գետտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնները (այսուհետ նաև՝ **Թիվ 45-Ա հրամանի հավելված**), որոնք տարածվում են **ապակե և բազալտե թելքային նյութերից պարբերական տրամատով հոծ և կլոր լայնական հատվածքով ոչ մետաղական կոմպոզիտային ամրանների** (այսուհետ նաև՝ **ոչ մետաղական ամրաններ**) վրա:

Ըստ նշված հավելվածի՝ ոչ մետաղական ամրանները կարելի է կիրառել հիմնական բեռնվածքներ չկրող կոնստրուկցիաներում ինչպես սովորական՝ ոչ ագրեսիվ, այնպես էլ՝ ագրեսիվ միջավայրերի (քլորիդներ, թթուներ և այլն)

[0%D1%80%D0%B0%D1%81%D0%BF%D1%80%D0%BE%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D0%BD%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B9%20%D0%B2%20%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8.](https://www.ifcg.ru/services/docs/tr/certificate-tr-eac/)

⁶ Ст'у Решение Коллегии Евразийской экономической комиссии от 25 декабря 2012 г. № 293, <https://www.ifcg.ru/services/docs/tr/certificate-tr-eac/>

ազդեցության պայմաններում, որոնք պողպատե ամրանների դեպքում առաջացնում են կոռոզիա:

Համաձայն ԳՕՍՏ 31384 ստանդարտի, ըստ կոռոզիոն վնասվածքի վտանգավորության ասիճանի՝ ոչ մետաղական ամրաններն ամենաքիչ վտանգավորն են և ագրեսիվ միջավայրերում շահագործման համար երկաթբետոնե կոնստրուկցիաների համեմատ ավելի նախընտրելի են:

Թիվ 45-Ա հրամանի հավելվածով սահմանված են նաև ոչ մետաղական կոմպոզիտային ամրաններին ներկայացվող տեխնիկական պահանջները, մասնավորապես՝ ձևի, չափերի և փաստաթղթերի նկատմամբ կիրառվող պահանջները, հիմնական բնութագրերին ներկայացվող պահանջները, փոխադրման և պահպանման կարգը, ոչ մետաղական ամրանի մատակարարման, ընդունման և որակի հսկման կանոնները, բետոնե կոնստրուկցիաներում ոչ մետաղական ամրանների կիրառման առանձնահատկությունները և այլն:

2.4. Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների կատարումն ապահովող սրանդարտները և միջազգային սրանդարտները.

Տեխնիկական կանոնակարգում տեղ է գտել նաև Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների կատարումն ապահովող ԳՕՍՏ ստանդարտների ցանկը:

Մասնավորապես՝ Տեխնիկական կանոնակարգում ամրագրված են հետևյալ ԳՕՍՏ ստանդարտները.

- ԳՕՍՏ 12344-2003, ԳՕՍՏ 12345-2001, ԳՕՍՏ 12346-78, ԳՕՍՏ 12347-77, ԳՕՍՏ 12348-78, ԳՕՍՏ 12350-78, ԳՕՍՏ 12352-81, ԳՕՍՏ 12355-78, ԳՕՍՏ 34028-2016 և այլն (ամբողջական ցանկը հասանելի է Տեխնիկական կանոնակարգի 11-րդ գլխում):

Ընդ որում, ինչպես վերը նշել ենք, Տեխնիկական կանոնակարգի 46-րդ կետի համաձայն՝ փորձարկումները պետք է կատարվեն վերոնշյալ ԳՕՍՏ ստանդարտներին համապատասխան:

Անդրադառնալով միջազգային ստանդարտներով նախատեսված կարգավորումներին, հարկ է նշել, որ ISO ստանդարտները (ISO 6935-1, ISO 6935-2, ISO 6935-3), ի թիվս այլնի, սահմանում են մեխանիկական հատկությունները, չափումները և ստուգման մեթոդները, որոնք կիրառվում են մետաղական ամրանների արտադրության և օգտագործման համար:

ISO ստանդարտները ամրանների շուկայում էական նշանակություն ունեն դրանց որակի, անվտանգության և հետագծելիության ապահովման համար:

Միևնույն ժամանակ, ISO ստանդարտներին հետևելով՝ մետաղական ամրանների շուկայում տնտեսավարող սուբյեկտները կարող են բարելավել

արտադրանքի որակը, բարձրացնել անվտանգությունը և մրցունակությունը արդյունաբերության մեջ:

2.5. Մետաղական ամրաններին առնչվող հարկային և մաքսային կարգավորումները.

ԵՏՀԽ թիվ 80 որոշման Ապրանքների մաքսային սակագների ցանկով Ապրանքների (7214 99-ից 7214 99 950 0) ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանվել է 5 %:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածից բխում է, որ մետաղական ամրանների արտադրության և շրջանառության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները չեն ազատվում ավելացված արժեքի հարկ (այսուհետ նաև՝ ԱԱՀ) վճարելուց:

Միևնույն ժամանակ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մետաղական ամրանների մատակարարումը համարվում է ԱԱՀ հարկման օբյեկտ, հետևաբար համաձայն նույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի՝ ԱԱՀ հարկման բազա է համարվում.

- ներքին մատակարարման դեպքում դրանց արժեքը՝ դրամական արտահայտությամբ,

- «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետությունում ապրանքի ներմուծման դեպքում՝ ԵԱՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և մաքսատուրքի հանրագումարը,

- ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը:

Հետևաբար, Հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, մետաղական ամրանների մատակարարման հարկման բազայի նկատմամբ 20% դրույքաչափով հաշվարկվում է ԱԱՀ:

Միևնույն ժամանակ, Կառավարության թիվ 1359-Ն որոշմամբ սահմանվել է «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով բացթողնման համար թույլատրվող ապրանքների ցանկը, որի մեջ ներառված են նաև ԱՏԳ ԱԱ 7214 ծածկագրով մետաղական ամրանները:

Անդրադառնալով ԵԱՏՄ իրավական ակտերին, հարկ է նշել, որ ԵՏԲԽ թիվ 16 որոշմամբ սահմանվել է այն զգայուն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ որոշումն ընդունվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից: Վերջինիս մեջ, ի թիվս այլնի, ներառված են ԱՏԳ ԱԱ 7214 99 100 0, 7214

99 390 0 ծածկագրերով ապրանքները, որոնք բետոնի ամրանավորման համար օգտագործվող տարատեսակ չափորոշիչներով արտադրված մետաղական ամրաններն են:

2.6. Սև մետաղների և սև մետաղի ջարդոնների արտահանման արգելքը, նախապատրաստվածքների արտահանման պետական փորքը.

Կառավարության 2024 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» թիվ 727-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **Կառավարության թիվ 727-Ն որոշում**) սահմանվել է, ի թիվս այլ ապրանքների, սև մետաղների և սև մետաղների ջարդոնների Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք՝ մինչև 2025 թվականի հունվարի 30-ը:

Կառավարության թիվ 727-Ն որոշման հիմնավորման համաձայն՝ սույն որոշման ընդունումը պայմանավորված է, ի թիվս այլնի, սև մետաղներից պատրաստված, օգտագործված ապրանքների արտահանումը կանոնակարգելու, տեղական արտադրությունը զարգացնելու և հումքային բազայով ապահովելու, ինչպես նաև նոր ներդրումների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության մշակող արդյունաբերության ոլորտի գործունեությունը խթանելու անհրաժեշտությամբ:⁷

Մասնավորապես, վերջին տարիների փորձը ցույց է տվել որպես հումք ներմուծվող (ինչպես ԵԱՏՄ երկրներից, այնպես էլ՝ երրորդ երկրներից) սև և գունավոր մետաղների ջարդոնով կամ նախապատրաստվածքով աշխատելու տնտեսական աննպատակահարմարությունը՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների բարձր գների, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտով դրանց ուղղակի առաքման հնարավորության բացակայության ու լոգիստիկ մեծ ծախսերի հետ: Արդյունքում, ներմուծված հումքով տեղական տնտեսավարող սուբյեկտների արտադրած վերջնական արտադրանքը ներմուծված նույն ապրանքների համեմատ բարձր ինքնարժեքի պատճառով ներքին շուկայում դառնում է ոչ մրցունակ:

Ըստ Կառավարության թիվ 727-Ն որոշման հիմնավորման՝ նշված գործոնները կարող են հանգեցնել տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակի վատթարացմանը և, ի վերջո, դրանց արտադրական գործունեության

⁷ Տե՛ս հղումը <https://www.e-gov.am/sessions/archive/2024/05/23/> :

խաթարմանն ու դադարեցմանը, ինչն էլ իր հերթին՝ ներմուծումից կախվածությանը:

Այս խնդիրներն ի հայտ են եկել վերջին տարիներին, երբ ԵԱՏՄ ընդհանուր շուկայում ձևավորված բարձր գների պատճառով նկատվում էին Հայաստանի Հանրապետությունից սև և գունավոր մետաղների ջարդոնի ինտենսիվ արտահանման գործընթացներ: Նշված գործընթացները չկանոնակարգելու դեպքում տեղական մետաղագործական և մետաղամշակման ոլորտի տասնյակ տնտեսավարող սուբյեկտներ ստիպված կլինեին որպես հումք օգտագործել բացառապես ներմուծվող մետաղի ջարդոնը կամ նախապատրաստվածքները:

Հաշվի առնելով վերոգրյալ խնդիրները՝ Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2269-Ն որոշմամբ ժամանակավորապես (6 ամիս ժամկետով) արգելվել էր սև և գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի, ինչպես նաև սև և գունավոր մետաղից պատրաստված օգտագործված որոշ ապրանքների (որոնք կորցրել են որպես առաջնային ապրանք օգտագործելու պիտանելիությունը) արտահանումը:

Կառավարության թիվ 727-Ն որոշման հիմնավորման համաձայն՝ արտահանման արգելքի կիրառման արդյունքում զգալի աճել են մետաղից արտադրող տեղական արտադրության ծավալները, մասնավորապես՝ արգելքի կիրառման հաջորդ տարում (2021թ.) պողպատի ձուլագլանվածքների արտադրությունն աճել է 8.4 անգամ, ինչպես նաև Կառավարության ձեռնարկած միջոցների արդյունքում 2022-2024 թվականներին կատարվել են տարատեսակ ներդրումներ տվյալ ոլորտում:

Նման դրական արդյունքը հանգեցրեց Կառավարության թիվ 727-Ն որոշմամբ, ի թիվս այլնի, սև մետաղների և սև մետաղների ջարդոնների արտահանման արգելքի ժամկետի երկարաձգման ևս 6 ամսով:

Ինչ վերաբերում է մետաղական նախապատրաստվածքների արտահանմանը, հարկ է նշել, որ ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է, ի թիվս այլնի, ԱՏԳ ԱԱ 7206, 7207 ծածկագրերով ապրանքների արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար սահմանել պետական տուրք՝ 1 տոննայի դիմաց բազային տուրքի 110-ապատիկի չափով:

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքն ընդունվել է 2024 թվականի փետրվարի 7-ին և ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Ըստ ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի հիմնավորման՝ դրա ընդունումը պայմանավորված է

Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակության ապրանքների (սև և գունավոր մետաղների և դրանցից արտադրվող արտադրատեսակների) արտաքին առևտուրը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

Ըստ ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի հիմնավորման՝ վերջինիս հիմնական նպատակն է ստեղծել առավել երկար արտադրական շղթաներ, խթանել սև և գունավոր մետաղների վերամշակման խորացումը տեղում՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով արտերկրից ներմուծումը կրճատելու և առավել բարձր ավելացված արժեքով տեղական ապրանքների արտադրության և արտահանման համար:

2.7. Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով Ոլորտին առնչվող իրավական կարգավորումները, կարող ենք արձանագրել հետևյալը.

- Կառավարության թիվ 607-Ն որոշմամբ հաստատված Տեխնիկական կանոնակարգով մանրամասն կարգավորվում են մետաղական ամրանների ներկայացվող մեխանիկական, տեխնիկական և քիմիական պահանջները, շրջանառության դուրսբերմանը, փաթեթավորմանը, փոխադրմանը, մակնշմանը և չափումների միասնականությանը ներկայացվող պահանջները:

- Մետաղական ամրանները շրջանառության մեջ դնելու էական պայման է հանդիսանում դրանց համապատասխանության գնահատումը և սերտիֆիկատի առկայությունը:

- Քաղաքաշինության կոմիտեի նախագահի թիվ 45-Ա հրամանով սահմանվում են ոչ մետաղական կոմպոզիտային ամրաններին ներկայացվող տեխնիկական պահանջները, մասնավորապես՝ ձևի, չափերի և փաստաթղթերի նկատմամբ կիրառվող պահանջները, հիմնական բնութագրերին ներկայացվող պահանջները, փոխադրման և պահպանման կարգին, ոչ մետաղական ամրանի մատակարարման, ընդունման և որակի հսկման կանոններին և բետոնե կոնստրուկցիաներում ոչ մետաղական ամրանների կիրառման առանձնահատկությունները:

- ԵՏՀԽ թիվ 80 որոշման Ապրանքների մաքսային սակագների ցանկով Ապրանքների (7214 99-ից 7214 99 950 0) ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանվել է 5 %:

- Կառավարության թիվ 727-Ն որոշման հիմնավորման համաձայն՝ արտահանման արգելքի կիրառման արդյունքում զգալի աճել են մետաղից արտադրող տեղական արտադրության ծավալները, մասնավորապես՝ արգելքի կիրառման հաջորդ տարում (2021թ.) պողպատի ձուլագլանվածքների

արտադրությունն աճել է 8.4 անգամ, ինչպես նաև Կառավարության ձեռնարկած միջոցների արդյունքում 2022-2024 թվականներին կատարվել են տարատեսակ ներդրումներ տվյալ ոլորտում:

- Սև մետաղի և սև մետաղի ջարդոնների արտահանման արգելքին զուգահեռ «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված փոփոխություններով և լրացումներով սև մետաղի և սև մետաղի ջարդոններից արտադրվող նախապատրաստվածքների արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար սահմանվել է պետական տուրք՝ 1 տոննայի դիմաց բազային տուրքի 110-ապատիկի չափով: Վերջինս ուղղված է ներքին արտադրության զարգացմանը և կանխում է սև մետաղի և սև մետաղի ջարդոնների արտահանումը նախապատրաստվածքի տեսքով:

ԳԼՈՒԽ 3. ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ

Ինչպես արդեն նշվել է, ամրանները դասակարգվում են ըստ մի շարք չափանիշների և բնութագրերի: Ամրանների արտադրության համար օգտագործվող նյութի տեսակից կախված՝ տարանջատվում են շինարարության մեջ օգտագործվող ամրանների մետաղական և ոչ մետաղական՝ կոմպոզիտային տեսակները: Ամրանների նշված տեսակների պահանջարկի տեսանկյունից փոխադարձ փոխարինելիությունը որոշելու համար դիտարկվել են հետևյալ գործոնները՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում (այսուհետ նաև՝ **ԱՏԳ ԱԱ, ԱՏԳ ապրանքային անվանացանկ**) նշված ապրանքատեսակների զբաղեցրած դիրքերը, դրանց տեխնիկական, որակական հատկանիշները, կիրառման նշանակությունը, օգտագործման բնութագրիչները, ապրանքատեսակների իրացման գները:

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ. Ուսումնասիրելով ամրանների դիտարկվող տեսակների ԱՏԳ ԱԱ զբաղեցրած դիրքերը՝ պարզ է դարձել, որ ամրանների նշված տեսակները ներառված են ԱՏԳ ապրանքային անվանացանկի առանձնացված դիրքերում: Այսպես, մետաղական ամրանները ներառված են ԱՏԳ ԱԱ 7214 ապրանքային դիրքում այլ ձողեր՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից, առանց հետագա մշակման՝ բացի կռումից, տաք գլոցումից, տաք կորզանումից կամ տաք արտամղումից, սակայն ներառյալ գլանումից հետո ոլորված ձողերը, իսկ կոմպոզիտային՝ հիմնականում ապակեպլաստե ամրանները ներառված են ԱՏԳ ԱԱ 3925 և ԱՏԳ ԱԱ 3926 ապրանքային դիրքերում:

Տեխնիկական և որակական բնութագրեր. Մետաղական և կոմպոզիտային ամրաններն իրենց տեխնիկական և որակական բնութագրերով, մասնավորապես՝ քաշով, ամրությամբ, առաձգականությամբ, կոռոզակայունությամբ էականորեն տարբերվում են միմյանցից:

Իրավական կարգավորումներ. Մետաղական և ոչ մետաղական ամրանների առնչությամբ առկա են իրավական տարբեր կարգավորումներ (ներկայացված է օրենսդրական կարգավորումները բաժնում), ինչը ևս կարող է փաստել դրանց տեխնիկական և որակական բնութագրերի, ինչպես նաև գործածության և կիրառման ոլորտների տարբերության մասին:

Կիրառման ոլորտները. Ոչ մետաղական (կոմպոզիտային) ամրանների կիրառության շրջանակը բավականին լայն է. այն կարող են կիրառվել բետոնե հատակների, հետիոտնային ճանապարհների, մայթերի ամրանավորման, ոռոգման, ջրահեռացման համակարգերի կոնստրուկտիվ տարրերի նորոգման և

այլ նպատակներով, սակայն շենքերի ու շինությունների, ինչպես նաև բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների կառուցման ընթացքում **կրող** կառուցվածքային տարրերի ամրանավորման կամ **հիմնական բեռնվածքներ կրող** կոնստրուկցիաներում, ի տարբերություն մետաղական ամրանների, ոչ մետաղական ամրանները չեն կարող կիրառվել:

Հարկ է նշել, որ կիրառման ոլորտի առումով մետաղական և կոմպոզիտային ամրաններն ունեն նաև ընդհանրություններ, մասնավորապես, մետաղական ամրանները ևս կոմպոզիտային ամրաններին զուգահեռ կարող են օգտագործվել ոչ կրող կառուցվածքային տարրերի ամրանավորման կամ ոչ հիմնական բեռնվածքներ կրող կոնստրուկցիաներում, հետիոտնային ճանապարհների, մայթերի ամրանավորման, ոռոգման, ջրահեռացման համակարգերի կոնստրուկտիվ տարրերի նորոգման և այլ նպատակներով, սակայն այդ ոլորտներում դրանց կիրառությունը տնտեսապես նպատակահարմար չէ, քանի որ կոմպոզիտային ամրանների բնութագրերը ամբողջապես թույլ են տալիս դրանց գործածությունը վերը նշված ոլորտներում և դրանք միջինում շուրջ 40%-ով էժան են մետաղական ամրաններից, այսինքն, **գնային** առումով ևս ամրանների նշված տեսակները փոխադարձ փոխարինելի չեն:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ մետաղական և ոչ մետաղական ամրանները փոխադարձ փոխարինելի չեն:

Ինչ վերաբերում է մետաղական ամրանների տարատեսակներին, կախված մի շարք բնութագրերից, ապա դրանց տեսակի, չափի ընտրությունը, ինչպես նաև փոխադարձ փոխարինելիության հարցը կախված է կոնկրետ նախագծերից և դրանցում առկա պահանջներից:

Ելնելով վերոգրյալ հանգամանքներից, Հանձնաժողովը տվյալ ուսումնասիրության շրջանակներում հատկորոշել է «Մետաղական ամրաններ» ապրանքային շուկան (այսուհետ նաև՝ **Ապրանքային շուկա**):

Ապրանքային շուկայի **ապրանքատեսակային սահմանը** ներառում է մետաղական ամրանների ողջ տեսականին:

Ապրանքային շուկայի **աշխարհագրական սահմանը** ներառում է ՀՀ ողջ տարածքը, քանի որ իրացվող մետաղական ամրանները հավասարապես ձեռքբերման համար հասանելի են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և գոյություն չունեն դրանց՝ Հայաստանի Հանրապետության մարզեր տեղափոխելու հետ կապված սահմանափակումներ և խոչընդոտներ:

Առանձին վարույթների կամ ուսումնասիրությունների շրջանակում, ըստ անհրաժեշտության, Ապրանքային շուկայի սահմանները կարող են սահմանվել ավելի լայն կամ նեղ:

ԳԼՈՒԽ 4. «ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

4.1 ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2022 թվականին ՀՀ է ներմուծվել շուրջ 112 հազար տոննա ամրան, իսկ 2023 թվականին ներմուծման ծավալներն աճել են շուրջ 34 տոկոսով և կազմել 150 հազար տոննա: 2023 թվականին ամրանի ներմուծումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների թվաքանակը ևս ավելացել է՝ 177-ից հասնելով 209-ի:

2022-2023 թվականներին ամրանի ներմուծումներ իրականացրած առավել խոշոր տնտեսավարող սուբյեկտների ներմուծման ծավալները, մասնաբաժինները, ինչպես նաև ներմուծված 1 կգ ամրանի միջին մաքսային արժեքը՝ ըստ առանձին տնտեսավարող սուբյեկտների, ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

2022-2023 թվականների ընթացքում ամրանի ներմուծումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների ներմուծման ծավալների, մասնաբաժինների և ներմուծված ամրանի միջին արժեքների վերաբերյալ⁸

Հ/հ	Տնտեսավարող սուբյեկտ	Ներմուծման ծավալը /տոննա/		Տնտեսավարող սուբյեկտի մասնաբաժինը		1 կգ-ի մաքսային միջին գինը /ՀՀ դրամ/	
		2022	2023	2022	2023	2022	2023
1	«Արկաթ» ՍՊԸ						
2	«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ						
3	«Միկմետալ» ՓԲԸ						
4	«Առանցք» ՍՊԸ						
5	«Մետալ գոուպ» ՍՊԸ						
6	«Օրդ դեվելոպմենթ» ՍՊԸ						
7	«Ավ մետալ» ՍՊԸ						
8	«Մարկետ պլյուս» ՍՊԸ						
9	«Ավետիք Ավետիսյան» ԱԶ						
10	«Աքսիոմ գրուպ» ՍՊԸ						
11	«Հովիկ Շաբոյան» ՍՊԸ						
12	«Մար-Նար» ՍՊԸ						
13	«Սպարտ» ՍՊԸ						
Այլ /2022-ին 164, 2023-ին՝ 196 տնտեսավարող սուբյեկտ/							
Ընդամենը		111,598	149,805	100%	100%	269	217


2023 թվականի ընթացքում մետաղական ամրանների առավել մեծ քանակի ներմուծումներ իրականացրել են «Արկաթ» և «ԱԳ Իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ ընդհանուր ներմուծման ծավալների

⁸ Դիտարկվող ժամանակահատվածում

համապատասխանաբար տոկոսը և տոկոսը: Ընդ որում, 2023 թվականին նշված տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները ընդհանուր ներմուծման ծավալներում աճել են՝ համապատասխանաբար 5 տոկոսով և 2 տոկոսով: Մնացյալ տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները 2023 թվականին չեն գերազանցել 4 տոկոսը (Գծապատկեր 2): 2022 թվականին ներմուծման ծավալներով առավել խոշոր երրորդ տնտեսավարող սուբյեկտի՝ «Միկմետալ» փակ բաժնետիրական ընկերության մասնաբաժինը 2023 թվականին

:

Գծապատկեր 2



Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 2-ի տվյալներից, 2023 թվականին 2022 թվականի համեմատ 1 կգ ամրանի ներմուծման միջին կոված մաքսային արժեքը 269 դրամից նվազել է շուրջ 52 դրամով և կազմել 217 դրամ:

Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը (ըստ ներմուծման).

Հանձնաժողովի կողմից հաշվարկվել են շուկայական կենտրոնացվածության գործակիցը (CR) և Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը (HHI)⁹:

⁹ CBU international conference on innovations in science and education. Concentration indices in analysis of competitive environment

Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը ստացվում է շուկայում ընկերությունների մասնաբաժինների քառակուսիների հանրագումարի արդյունքում:

$$HHI = Y_1^2 + Y_2^2 + Y_3^2 + \dots + Y_n^2,$$

որտեղ՝

HHI-ն Հերֆինդալ - Հիրշմանի ինդեքսն¹⁰ է,

Y_n-ը՝ n-երրորդ ընկերության մասնաբաժինը տվյալ ապրանքային շուկայում:

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ 2022 թվականին Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը «Մետաղական ամրան» ապրանքային շուկայի ներմուծման տվյալներով կազմել է **1093**, իսկ 2023 թվականին՝ **1204**: Սա նշանակում է, որ 2023 թվականին «Մետաղական ամրան» ապրանքային շուկան ունեցել է կենտրոնացվածության միջին մակարդակ: 2023 թվականին 2022 թվականի համեմատ շուկայի կենտրոնացվածության մակարդակը ավելացել է:

Շուկայական կենտրոնացվածության գործակիցը (CR) տվյալ շուկայում գործող որոշակի քանակի (n) խոշոր տնտեսվարող սուբյեկտների ապրանքային շուկայում ունեցած մասնաբաժինների գումարն է (արտահայտված տոկոսներով):

$$CR = \sum_{i=1}^n D_i$$

Որտեղ՝

D – ապրանքային շուկայում գործող i խոշոր տնտեսվարող սուբյեկտի տոկոսներով արտահայտված մասնաբաժինը,

n – տվյալ ապրանքային շուկայում գործող դիտարկվող խոշոր տնտեսվարող սուբյեկտների քանակ,

2022 թվականի ընթացքում «Մետաղական ամրան» ապրանքային շուկայի առաջին երեք մասնակիցների ներմուծման տվյալներով նշված ցուցանիշը կազմել է **54%**¹¹ **CR3=54**¹¹, իսկ 2023 թվականին նվազել է 3 տոկոսային կետով՝ **CR3=51**: Այսինքն՝ Ապրանքային շուկան Դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է **կենտրոնացվածության միջին մակարդակ**: Հատկանշական է, որ մետաղական ամրաններ ներմուծող առավել խոշոր 3 տնտեսվարող սուբյեկտների կազմը և ծավալները 2023 թվականին 2022 թվականի համեմատ փոփոխվել են, ինչից

¹⁰Այն դեպքում, երբ ցուցանիշը փոքր է 1,000-ից, դիտարկվող շուկան կենտրոնացված չի համարվում, 1,000-ից 2,000-ի միջակայքում լինելու դեպքում համարվում է միջին, իսկ 2000-ից բարձր լինելու դեպքում՝ բարձր կենտրոնացվածության մակարդակ ունեցող:


¹¹ Երեք ընկերության մասով հաշվարկ կատարելու դեպքում շուկան համարվում է կենտրոնացվածության ցածր մակարդակ ունեցող, եթե CR3<45%, կենտրոնացվածության միջին մակարդակ ունեցող, եթե 45%<CR3<70% և կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող, եթե CR3>70%:

կարող է հետևել, որ Ապրանքային շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների միջև առկա է եղել մրցակցություն:

Ներմուծման աշխարհագրական կառուցվածքը.

Ինչպես ցույց է տվել իրականացված վերլուծությունը, տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասը ներմուծումներն իրականացրել է Իրանից. 2022 թվականին 137 տնտեսավարող սուբյեկտ, իսկ 2023 թվականին՝ 158 (տես՝ Գծապատկեր 3): Ռուսաստանի Դաշնությունից 2022 թվականին ներմուծումներ է իրականացրել 41 տնտեսավարող սուբյեկտ, իսկ 2023 թվականին՝ 56:


Գծապատկեր 3



2022 թվականին ՀՀ ներմուծված մետաղական ամրանի 76 տոկոսը տնտեսավարող սուբյեկտները ձեռք են բերել Իրանից, 15 տոկոսը՝ Վրաստանից, 9 տոկոսը՝ Ռուսաստանից, 1 տոկոսը՝ Ուկրաինայից (տես՝ Գծապատկեր 4):


2023 թվականին ամրանի ներմուծման աշխարհագրության կառուցվածքում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել, մասնավորապես՝ ներմուծված ամրանի արդեն իսկ 90 տոկոսը 2023 թվականին ձեռք է բերվել Իրանից, մնացյալ մասը՝ Ռուսաստանից:

Գծապատկեր 4



Հանձնաժողովի կողմից դիտարկվել է նաև մետաղական ամրանների ներմուծման արժեքը՝ ըստ արտահանման երկրի, ինչը ցույց է տվել, որ առավել ցածր գնով ձեռքբերումներն իրականացվել են Իրանից (տես՝ Գծապատկեր 5): 2022 թվականի հունվարից ապրիլ-մայիսն ընկած ժամանակահատվածում տեղի է ունեցել 1 կգ ամրանի ներմուծման միջին մաքսային արժեքի աճ ինչպես Իրանից, այնպես էլ Ռուսաստանից ներմուծումների դեպքում, ինչից հետո ամրանի միջին կշռված մաքսային արժեքի նվազման միտում է նկատվում:

Գծապատկեր 5




Կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ Դիտարկվող ժամանակահատվածում Իրանից ձեռքբերված միավոր կգ հաշվով մետաղական ամրանների միջին մաքսային արժեքը համեմատաբար ավելի ցածր է եղել, քան այլ երկրներից ներմուծված մետաղական ամրանների միջին մաքսային արժեքը: Նշված հանգամանքը կարող էր Իրանից մետաղական ամրանների ներմուծման ծավալների աճի պատճառներից հանդիսանալ:

Ինչպես արդեն նշվել է, մետաղական ամրանները ՀՀ են ներմուծվում հիմնականում ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո, որում սակայն որոշակի ծավալով այլ արտադրատեսակներ էլ են ներառված: 2022 և 2023 թվականների տվյալների համաձայն՝ ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո ներմուծված ապրանքատեսակների շուրջ 91 տոկոսը (արժեքային արտահայտությամբ) եղել են մետաղական ամրաններ¹²:

ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ապրանքների ներմուծման երկարաժամկետ կտրվածքով ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022 թվականին կտրուկ աճ է գրանցվել՝ 44 հազար տոննայից հասնելով շուրջ 118 հազար տոննայի (տես՝ Գծապատկեր 6):


Գծապատկեր 6



Գծապատկեր 7-ի տվյալներից կարող ենք տեսնել, որ 2006 թվականից սկսած ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո ներմուծված ապրանքների զգալի մասը ներմուծվել է Ուկրաինայից, իսկ 2019 թվականից սկսած տնտեսավարող սուբյեկտները ներմուծումներ են իրականացրել Իրանից: 2020 թվականին Իրանից ներմուծումների մասնաբաժինը ընդհանուր ներմուծման ծավալներում նվազել է, իսկ 2021 թվականից սկսած աճման միտում է ունեցել:

¹² Բնաիրային արտահայտությամբ 2022 թվականի տվյալների համաձայն՝ ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո ներմուծված ապրանքատեսակների գրեթե 80 տոկոսն է եղել մետաղական ամրան:

Գծապատկեր 7



Հարկ է նկատել, որ մետաղական ամրաններին ներկայացվող պահանջները սահմանված են Տեխնիկական կանոնակարգով, որի 1-ին կետի համաձայն՝ Տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է, ի թիվս այլնի, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերին համապատասխան հետևյալ պողպատե արտադրանքների վրա՝ **ամրանային ձողեր՝ բեկոնի ամրանավորման համար օգտագործվող, ածխածնային պողպատից, շիկազուցված՝ 7214 99-ից**:

Այս առումով, հատկանշական է այն հանգամանքը, որ Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծված ամրանների միայն 2 տոկոսն է ներմուծվել ԱՏԳ ԱԱ 7214 99 կոդի ներքո, իսկ մնացյալ՝ **98 տոկոսը** ինչպես 2022, այնպես էլ 2023 թվականներին ՀՀ է ներմուծվել **ԱՏԳ ԱԱ 7214 20** կոդի ներքո:

Ընդ որում, ոչ միայն հենց ներմուծումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտները, այլև

ընկերությունը, որը գործունեություն է ծավալում «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն» (41.20.1) ոլորտում, սեփական օգտագործման համար ներմուծվող մետաղական ամրանները Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծել է ԱՏԳ ԱԱ 7214 20 կոդի ներքո:

ԱՏԳ ԱԱ 7214 ծածկագրի ներքո դասվող ապրանքատեսակների մանրամասն նկարագրությունը ներկայացված է ստորև աղյուսակով.

ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
7214	Ձողեր՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից, առանց հետագա մշակման՝ կռումից, տաք գլոցումից, տաք կորզանումից կամ տաք արտամղումից բացի, ներառյալ՝ գլանումից հետո ոլորված ձողերը, այլ՝
7214 10 000 0	- կռած
7214 20 000 0	- փորվածքներ, ելուստներ, ակոսներ կամ այլ դեֆորմացիաներ ունեցող՝ ստացված գլոցման պրոցեսում կամ ոլորված գլոցումից հետո
7214 30 000 0	- այլ ավտոմատային պողպատից - այլ՝
7214 91	- - ուղղանկյուն (բացի քառակուսուց) լայնական հատույթով՝
7214 91 100 0	- - - 0,25% զանգվածային բաժնից պակաս ածխածին պարունակող
7214 91 900 0	- - - 0,25% զանգվածային բաժին կամ ավելի ածխածին պարունակող
7214 99	- - այլ՝ - - - 0,25% զանգվածային բաժնից պակաս ածխածին պարունակող՝
7214 99 100 0	- - - - բետոնի ամրանավորման համար օգտագործվող - - - - այլ կլոր հատմամբ, տրամագծով՝
7214 99 310 0	- - - - - 80 մմ կամ ավելի
7214 99 390 0	- - - - - 80 մմ-ից պակաս
7214 99 500 0	- - - - այլ - - - 0,25% զանգվածային բաժին կամ ավելի ածխածին պարունակող՝ - - - - կլոր հատմամբ, տրամագծով՝
7214 99 710 0	- - - - - 80 մմ կամ ավելի
7214 99 790 0	- - - - - 80 մմ-ից պակաս
7214 99 950 0	- - - - այլ

Ելնելով ողջ վերոգրյալից՝ առաջանում են մի շարք հարցեր, մասնավորապես.

1. Արդյո՞ք ԱՏԳ ԱԱ 7214 20 և ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրի ներքո դասվող ապրանքատեսակները կարող են ունենալ կիրառման միևնույն նշանակությունը և օգտագործման ոլորտը, թե ոչ: Ո՞րն է հանդիսանում նշված ապրանքատեսակների հիմնական տարբերությունը:

2. Ի՞նչ չափանիշներից ելնելով է առանձնացվել **ԱՏԳ ԱԱ 7214 99 դասակարգիչը**, որի համար, ի տարբերություն ԱՏԳ ԱԱ 7214 քառանիշ դասակարգչի մնացյալ բացվածքների, տարածվում են Տեխնիկական կանոնակարգի պահանջները, այդ թվում՝ համապատասխանության գնահատման պահանջը:

3. Գործու՞մ է արդյոք սահմանային կամ որևէ այլ վերահսկողական մեխանիզմ՝ պարզելու համար, թե ՀՀ ներմուծվող ամրանները ԱՏԳ ԱԱ 7214 դասակարգչի վեցանիշ ռի բացվածքին են պատկանում: Ներմուծման ժամանակ ստուգվու՞մ է արդյոք ապրանքատեսակների համապատասխանությունը հայտարարագրված վեցանիշ բացվածքներին, թե ոչ, և ի՞նչ եղանակով է դա հավաստվում:

4. Այն դեպքում, երբ Տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են միայն ԱՏԳ ԱԱ 7214 99 դասակարգչի ներքո դասվող ապրանքատեսակների վրա, թույլատրելի՞ է արդյոք Հայաստանի Հանրապետությունում բետոնի ամրանավորման համար օգտագործել ԱՏԳ ԱԱ 7214 դասակարգչի այլ բացվածքների (այդ թվում՝ ԱՏԳ ԱԱ 7214 20) ներքո ներմուծված ապրանքատեսակները, թե ոչ, և սահմանված են արդյոք տեխնիկական պահանջներ այդ ապրանքների համար:

5. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքի նկատմամբ համապատասխանության ստուգումները իրականացվում են Հայաստանի Հանրապետություն **ԱՏԳ ԱԱ 7214 դասակարգչի** ներքո ներմուծված բոլոր ապրանքատեսակների դեպքում, թե՞ միայն՝ **ԱՏԳ ԱԱ 7214 99** դասակարգչի ներքո դասվող ապրանքատեսակների:

6. Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքի նկատմամբ ստուգումները իրականացվում են շրջանառվող և՛ ներմուծված, և՛ արտադրված ապրանքների դեպքում, թե՞ ոչ: Տեղական արտադրության ապրանքատեսակների ստուգումների առնչությամբ ի՞նչ է այն ապրանքատեսակների ցանկը, որը ենթակա են ստուգման և որո՞նք են դրա չափորոշիչները և իրավական հիմքերը:

7. Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքի նկատմամբ համապատասխանության ստուգումները

շրջանառության ռիսկի փոխում են իրականացվում՝ ներմուծում, արտադրություն, իրացում, կառուցապատում:

8. Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե ռիսկի արտադրանքն է (ըստ ապրանքատեսակի ԱՏԳ ԱԱ դասակարգչի վեցանիշ բացվածքի) թույլատրվում օգտագործել շինարարության ոլորտում և որոնք են դրանց համապատասխանության չափանիշները՝ ըստ կիրառման և օգտագործման ոլորտների:

9. Քաղաքաշինության կոմիտեի կողմից բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքի ռիսկի ապրանքատեսակների նկատմամբ է իրականացվում վերահսկողություն:

Նշված հարցերը քննարկվել են համապատասխան մարմինների հետ՝ Էկոնոմիկայի նախարարություն, Պետական եկամուտների կոմիտե, Շուկայի վերահսկողության տեսչական մարմին և Քաղաքաշինության կոմիտե:

Համաձայն Էկոնոմիկայի նախարարության՝ բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի լրամշակման նպատակով շահագրգիռ մարմիններից կազմված աշխատանքային խմբի համապատասխան մասնագետները, գնահատելով մարդու կյանքի, առողջության վրա բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքների ազդեցության ռիսկի աստիճանը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում առկա համապատասխան ԱՏԳ ԱԱ ծածկագրերի ներքո ներառված արտադրանքի համապատասխանության գնահատման կարողությունները, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 607-Ն որոշման մեջ ներառվել են միայն 7214 99-ից, 7213 91 100 0, 7213 99-ից, 7217 10-ից, 7312 10-ից արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերը (դրանք ներառված են նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 80 որոշման մեջ):

Համաձայն Պետական եկամուտների կոմիտեի՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7214 ապրանքային դիրքում ընդգրկվող բոլոր ապրանքատեսակների համար համատարած սահմանված է ներմուծման մաքսատուրքի 5% դրույքաչափ, ուստի զանձման ենթակա մաքսային վճարների (մաքսատուրք, ԱԱՀ) մասով որևէ տարբերություն չի առաջանում, որևիցե տարբերություն չի առաջանում նաև ոչ սակագնային հսկողության առումով, ուստի տվյալ պարագայում դասակարգման ճշգրտության թիրախային հսկողությունը դիտարկվում է ցածր ռիսկային: ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7214 99 ենթադիրքում հայտարարագրված ձողերի դասակարգման այնպիսի հատկանիշի գնահատումը, ինչպիսին ածխածնի զանգվածային բաժինն

է, մաքսային մարմինների կողմից հիմնականում իրականացվում է՝ առկայության դեպքում, դրանց պատրաստման նյութ հանդիսացող պողպատի ֆիզիկաքիմիական բնութագրերի լաբորատոր փորձաքննության արդյունքների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերում նշված տեղեկությունների համացանցային ուսումնասիրությամբ (օրինակ՝ պողպատի տեսակի (марка стали) ուսումնասիրություն):

Ըստ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի՝ բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքների նկատմամբ ստուգումներն իրականացվում են Տեխնիկական կանոնակարգի հիման վրա մշակված ստուգաթերթի հիման վրա: Ստուգման են ենթարկվում այն արտադրանքները, որոնց արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերը նշված են Տեխնիկական կանոնակարգում: ՀՀ տարածք ներմուծված և տարածքում արտադրված բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքների նկատմամբ համապատասխանության ստուգումներն իրականացվում են իրացման փուլում: Տեղական արտադրության բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրատեսակներն ենթակա են ստուգման, եթե դրանց չափորոշիչները համապատասխանում են Տեխնիկական կանոնակարգում նշված արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերի համապատասխան չափորոշիչներին:

Ըստ Քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2021 թվականի հունվարի 14-ի N 02-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 52-01-2021 «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերի.

- 162-րդ կետի համաձայն՝ երկաթբետոնե կոնստրուկցիաների ամրանավորման համար անհրաժեշտ է կիրառել համապատասխան ստանդարտների կամ սահմանված կարգով հաստատված տեխնիկական պայմանների պահանջները բավարարող հետևյալ տեսակի ամրաններ՝

1) շիկազլոցված հարթ մակերևույթի և պարբերական տրամատի, ելունների՝ հաստատուն և փոփոխական բարձրությամբ (համապատասխանաբար օղակաձև և մանգաղաձև տրամատի), 6 մմ-ից մինչև 50 մմ տրամագծով,

2) ջերմամեխանիկական եղանակով ամրացված, պարբերական տրամատի՝ 6 մմ -ից մինչև 50 մմ տրամագծով,

3) սառնադեֆորմացված պարբերական տրամատի՝ 3 մմ-ից մինչև 16 մմ տրամագծով,

4) ամրանային ճոպաններ՝ 6 մմ-ից մինչև 18 մմ տրամագծով:

- 166-րդ կետի համաձայն՝ երկաթբետոնե կոնստրուկցիաների համար հաշվարկով տեղադրվող չլարված աշխատանքային ամրաններ, անհրաժեշտ է առավելագույն կիրառել A400, A500 և A600 դասերի եռակցելի պարբերական տրամատի ամրաններ, ինչպես նաև B500 և Bp500 դասերի ամրաններ՝ եռակցված ցանցերի և հիմնակմախքների համար,

- 168-րդ կետի համաձայն՝ որպես լարված աշխատանքային ամրաններ՝ անհրաժեշտ է առավելագույն օգտագործել ձողային շիկազլոցված կամ ջերմամեխանիկական ամրացված A800 և A1000 դասերի ամրաններ, Bp1400 և Bp1500 դասերի կայունացված ամրանային մետաղալարեր ու K1500 և K1600 դասերի յոթլարանի կայունացված ամրանային ճոպաններ,

-172-րդ կետի համաձայն՝ նախալարված երկաթբետոնե կոնստրուկցիաների համար անհրաժեշտ է նախատեսել.

1) որպես նախալարվող ամրաններ՝

ա. շիկազլոցված և ջերմամեխանիկական եղանակով ամրացված պարբերական տրամատի A600, A800 և A1000 դասերի,

բ. սառնադեֆորմացված պարբերական տրամատի Bp1200 -ից մինչև Bp1500 դասերի,

գ. ճոպանային 7-լարային (K7) K1400, K1500, K1600 դասերի,

2) որպես չլարված ամրաններ՝

ա. շիկազլոցված հարթ մակերևույթի A240 դասի,

բ. շիկազլոցված, ջերմամեխանիկական եղանակով ամրացված և սառնադեֆորմացված պարբերական տրամատի A400, A500, A600, B500 և Bp500 դասերի:

Ելնելով վերոգրյալից, կարևորվում է համանման գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև համանման ապրանքների նկատմամբ հավասար պահանջներ ու մրցակցային պայմաններ ապահովելը, ուստի Հանձնաժողովն առաջարկում է քննարկման առարկա դարձնել հետևյալը.

1. Այն դեպքում, եթե Տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրի ապրանքատեսակների վրա, և բերոնի ամրանավորման համար օգտագործվող ամրանները չեն կարող ներմուծվել այլ ծածկագրերի ներքո, անհրաժեշտ է ուժեղացնել սահմանային վերահսկողությունն այնպես, որպեսզի բացառվեն ռիսկերն առ այն, որ տնտեսավարող սուբյեկտները հեղափոխ ստուգումներից խուսափելու կամ այլ նպատակներից ելնելով ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրին համարժեք ապրանքատեսակները ներմուծեն ԱՏԳ ԱԱ 7214 ծածկագրի վեցանիշ որևէ այլ բացվածքի ներքո:

2. Այն դեպքում, եթե ԱՏԳ ԱԱ 7214 20 և ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրերի ներքո դասվող ապրանքատեսակները կարող են ունենալ կիրառման նույն նշանակությունը և օգտագործման ոլորտը, ապա դիտարկել Տեխնիկական կանոնակարգի պահանջների տարածումը ԱՏԳ ԱԱ 7214 քառանիշ ծածկագրի այլ բացվածքների նկատմամբ ևս (հաշվի առնելով կիրառման նույն նշանակություն ունենալը), որպեսզի ոլորտում համանման գործունեություն իրականացնող փնտեսավարող սուբյեկտների և համանման ապրանքների ներմուծման և շրջանառության հավասար պահանջներ ու մրցակցային պայմաններ ապահովվեն:

4.2 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԾՔԸ

ՀՀ-ում ամրանների արտադրություն Դիտարկվող ժամանակահատվածում իրականացրել է «Ասկե Գրուպ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ «Ասկե Գրուպ» Ընկերություն):

Աղյուսակ 3

2022-2023 թվականներին և 2024 թվականի առաջին կեսին ՀՀ-ում արտադրված ամրանների ծավալների և արժեքների վերաբերյալ


Տարի	Արտադրություն		Իրացում	
	Ծավալ /տոննա/	Միջին ինքնարժեք /ՀՀ դրամ, 1 տոննայի համար/	Ծավալ /տոննա/	Միջին իրացման արժեք /ՀՀ դրամ, առանց հարկերի, 1 տոննայի համար/
2022	88,758		88,947	
2023	104,876		104,113	
2024 առաջին կես	42,092		43,013	

Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 3-ի տվյալներից, 2023 թվականին 2022 թվականի համեմատ ամրանների արտադրության ծավալը աճել է 18 տոկոսով և կազմել է շուրջ 105 հազար տոննա:

Համաձայն «Ասկե Գրուպ» ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծության՝ 2022 թվականին 1 տոննա ամրանի արտադրության միջին ինքնարժեքը կազմել է շուրջ դրամ, իսկ 2023 թվականին՝ շուրջ դրամ, իսկ իրացման միջին արժեքը համապատասխանաբար կազմել է շուրջ դրամ և շուրջ դրամ՝ առանց հարկերի:

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում արտադրված ամրանների ծավալը ամսական կտրվածքով ներկայացված է Գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6



Հանձնաժողովի կողմից դիտարկվել է նաև «Ասկե Գրուպ» ընկերության ծախսերի կառուցվածքը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ամրանների արտադրության գործընթացը բաղկացած է երկու հիմնական փուլերից՝

1. Նախապատրաստվածքի արտադրություն,
2. Նախապատրաստվածքից ամրանի արտադրություն:

Նախապատրաստվածքի արտադրություն

Նախապատրաստվածքի ինքնարժեքի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ծախսերի շուրջ **տոկոսը** բաժին է ընկնում նյութածախսին՝ շուրջ **տոկոսը** կազմում է սև մետաղի ջարդոնը, շուրջ **տոկոսը**՝ կիր, ֆերրոսիլիկոմանգան, ֆերրոսիլիցիում և այլ նյութեր: Նախապատրաստվածքի արտադրության ինքնարժեքի շուրջ **տոկոսը** կազմում են էներգակիրներին ուղղված ծախսերը (տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Միավոր տոննա նախապատրաստվածքի ինքնարժեքի կառուցվածքը

1 տոննա նախապատրաստվածքի ինքնարժեք	Միավոր տոննայի հաշվով /դրամ/	Մասնաբաժինը ընդհանուր ծախսերի մեջ
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝		
1. նյութածախս, այդ թվում՝		
1.1 սև մետաղի ջարդոն		
1.2 Կիր, ֆերրոսիլիկոմանգան, ֆերրոսիլիցիում, այլ նյութեր		
2. Կոմունալ ծախսեր		
3. Աշխատավարձ		
4. Մաշվածք		
5. Այլ օժանդակ ծախսեր		

Ամրանի արտադրություն

Իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ ամրանի արտադրության ինքնարժեքի շուրջ **տոկոսը** կազմում է նախապատրաստվածքը: Արտադրության այս փուլում էներգակիրներին ուղղված ծախսերը կազմում են ամրանի արտադրության ինքնարժեքի շուրջ **տոկոսը** (տես՝ Աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Միավոր տոննա ամրանի ինքնարժեքի կառուցվածքը

Ծախսի տեսակը	Միավոր տոննայի արժեք			Մասնաբաժինը ընդամենը ծախսերում /տոկոս/		
	2022	2023	2024 (1-ին կիսամյակ)	2022	2023	2024 (1-ին կիսամյակ)
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝						
1. Ուղղակի ծախսեր, այդ թվում՝						
1.1 նյութածախս՝ նախապատրաստվածք						
1.2 Կոմունալ ծախսեր						
1.3 Մաշվածք						
1.4 Աշխատավարձ						
1.5 Այլ ծախսեր						
2. Վարչական ծախսեր						
3. Ֆինանսական ծախսեր						

Այսպիսով, իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ 2022-2023 թվականներին ամրանների արտադրության ինքնարժեքի շուրջ **տոկոսը** կազմել է նյութածախսը: Սև մետաղի ջարդոնի ձեռքբերմանն ուղղված ծախսերի մասնաբաժինը ընդհանուր ինքնարժեքում 2022 թվականին կազմել է **տոկոս**,

իսկ 2023 թվականին՝ տոկոս: Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 6-ի տվյալներից, միավոր տոննա ամրանի ինքնարժեքում սև մետաղի ջարդոնի ծախսը 2023 թվականին գրեթե տոկոսով և կազմել շուրջ դրամ՝ 1 տոննայի հաշվով: Կոմունալ ծախսերի, այդ թվում՝ էներգակիրներին ուղղված ծախսերը 2023 թվականին 2022 թվականի համեմատ և 1 տոննա ամրանի արտադրության ընդհանուր ինքնարժեքում կազմել՝ տոկոս: 2023 թվականին ֆինանսական ծախսերը, աշխատավարձերին ուղղված վճարները, մաշվածքը և այլ ծախսերը համապատասխանաբար կազմել են տոկոս, տոկոս, տոկոս և տոկոս:

Աղյուսակ 6


Միավոր տոննա ամրանի ինքնարժեքի կառուցվածքի բացվածքը

Ամրանի արտադրության ինքնարժեք		ՀՀ դրամ		Մասնաբաժինը ինքնարժեքի մեջ	
		2022	2023	2022	2023
Հ/հ	1 տոննայի հաշվով ինքնարժեք, այդ թվում՝				
1	Նյութածախս, այդ թվում՝				
1.1	սև մետաղի ջարդոն				
1.2	կիր				
1.3	Ֆերրոսիլիկոմանգան				
1.4	Ֆերրոսիլիցիում				
1.5	Այլ նյութեր				
2	Կոմունալ ծախսեր				
3	Ֆինանսական ծախսեր				
4	Աշխատավարձ				
5	Մաշվածք				
6	Այլ ծախսեր				

Արտադրված և իրացված ամրանների գծով «Ասկե Գրուպ» ընկերության միջին տարեկան եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի 2022 թվականին կազմել է **տոկոս**, իսկ 2023 թվականին՝ **տոկոս**:

«Ասկե Գրուպ» ընկերության կողմից իրացված 1 տոննա ամրանի իրացման միջին ամսական գները (առանց ԱԱՀ) ներկայացված են Գծապատկեր 7-ում: Ինչպես կարող ենք տեսնել Գծապատկեր 7-ի տվյալներից, Դիտարկվող ժամանակահատվածում 1 տոննա ամրանի միջին իրացման գները նվազման միտում են ունեցել:

Գծապատկեր 7



«Ասկե Գրուպ» ընկերությունն արտադրված ամրանները գրեթե ամբողջապես իրացնում է «Միկմետալ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Միկմետալ» ընկերություն**), որի միջոցով իրականացվում է ՀՀ-ում արտադրված ամրանների իրացումը ՀՀ տարածքում: Ելնելով նշվածից՝ Հանձնաժողովը դիտարկել է «Միկմետալ» ընկերության գործունեությունը:

Աղյուսակ 7

**«Միկմետալ» ընկերության կողմից ներմուծված և ՀՀ տարածքից
ձեռքբերված ամրանների ծավալների և արժեքների վերաբերյալ, 2022 և 2023
թվականներ**

Տարի	Ներմուծման ծավալ /տոննա/	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/	ՀՀ տարածքում ձեռքբերման ծավալ /տոննա/	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/	Ընդամենը ձեռքբերում և ներմուծում	
					տոննա	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/
2022						
2023						

Աղյուսակ 8

«Միկմետալ» ընկերության կողմից ամրանների իրացման ծավալների և արժեքների վերաբերյալ, 2022 և 2023 թվականներ

Տարի	Մեծածախ իրացում		Մանրածախ իրացում		Ընդամենը իրացում		ՀՀ տարածքից ձեռքբերված և իրացրած ամրան	
	տոննա	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/	տոննա	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/	տոննա	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/	տոննա	Միավոր տոննայի արժեք /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/
2022								
2023								

Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 7-ի տվյալներից, «Միկմետալ» ընկերությունը 2022 թվականին ներմուծել է շուրջ տոննա ամրան, իսկ 2023 թվականին «Միկմետալ» ընկերության կողմից ամրանների ներմուծումը կազմելով տոննա:

Ինչպես 2022, այնպես էլ 2023 թվականին «Միկմետալ» ընկերության կողմից ձեռք է բերվել¹³ և իրացվել ավելի քան տոննա ամրան: Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 8-ի տվյալներից, «Միկմետալ» ընկերության կողմից իրացված ամրանների մեծածախ և մանրածախ իրացման գները միջինում էապես չեն տարբերվել: 2022 թվականին ՀՀ-ում արտադրված ամրանները «Միկմետալ» ընկերությունը մեծածախ և մանրածախ եղանակով իրացրել է միջինում 1 տոննայի հաշվով շուրջ դրամով /առանց ԱԱՀ/, իսկ 2023 թվականին՝ շուրջ հազար դրամով /առանց ԱԱՀ/:

4.3 ԻՐԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2022 թվականին ՀՀ-ում իրացվել է շուրջ 207 հազար տոննա ամրան, իսկ 2023 թվականին իրացման ծավալը աճել է շուրջ 26 տոկոսով և կազմել է 261 հազար տոննա: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում իրացված ամրանների տոկոսը եղել են տեղական արտադրության ամրանները: Ամրանների իրացման շուկայում առավել մեծ մասնաբաժին է ունեցել «Ասկե Գրուպ» ընկերությունը: 2023 թվականին՝ տոկոս, այնուհետև առավել խոշոր ներմուծող «Արկաթ» ընկերությունը՝ տոկոս մասնաբաժնով (տես՝ Աղյուսակ 12):

¹³ Ներառում է ներմուծումը և ՀՀ տարածքից ձեռքբերումը:

Աղյուսակ 12

**Ամրանների իրացման կառուցվածքը՝ ըստ տնտեսավարող սուբյեկտների,
2022-2023 թվականներ**

Հ/հ	Տնտեսավարող սուբյեկտ	2022		2023		Մասնաբաժին /տոկոս/	
		տոննա	տոննայի միջին իրացման արժեք /դրամ, առանց ԱԱՀ/	տոննա	տոննայի միջին իրացման արժեք /դրամ, առանց ԱԱՀ/	2022	2023
1	«Ասկե Գրուպ» ԲԲԸ						
	«Միկմետալ» ՓԲԸ (Ասկե Գրուպ ԲԲԸ դիստրիբյուտոր)						
2	«Արկաթ» ՍՊԸ						
3	«ԱԳ Իմպեքս» ՍՊԸ						
4	«Մետալ Գրուպ» ՍՊԸ						
5	«Առանցք» ՍՊԸ						
6	«ԱՎ Մետալ» ՍՊԸ						
7	Ավետիք Ավետիսյան ԱԶ						
8	«Մարկետ Պլուս» ՍՊԸ						
Այլ							
Ընդամենը		206,961		261,094		100%	100%

Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը (ըստ իրացման).


2022 թվականին Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը «Մետաղական ամրան» ապրանքային շուկայի իրացման տվյալներով կազմել է **2151**, իսկ 2023 թվականին՝ **2010**: Սա նշանակում է, որ Դիտարկվող ժամանակահատվածում «Մետաղական ամրան» ապրանքային շուկան ունեցել է կենտրոնացվածության բարձր մակարդակ: Միևնույն ժամանակ 2023 թվականին 2022 թվականի համեմատ շուկայի կենտրոնացվածության մակարդակը նվազել է:

2022 թվականին «Մետաղական ամրան» ապրանքային շուկայի առաջին երեք մասնակիցների՝ իրացնողների մասնաբաժինը կազմել է **64 տոկոս**, իսկ 2023 թվականին՝ **66 տոկոս**: Այսինքն՝ 2022 թվականին **CR3=64**, իսկ 2023 թվականին՝ **CR3=66**: Այս տվյալների համաձայն Ապրանքային շուկան 2022 և 2023 թվականներին ունեցել է կենտրոնացվածության միջին մակարդակ:

Իրացման գների ուսումնասիրություն.

Ներմուծված ամրանի միջին ամսական մեծածախ և մանրածախ իրացման արժեքները ներկայացված են Գծապատկեր 8-ում, որից կարող ենք տեսնել, որ ամրանի իրացման ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ իրացման գները 2022 թվականի առաջին եռամսյակին աճման միտում են ունեցել, ինչից հետո՝ մինչև 2023 թվականի դեկտեմբեր՝ ընդհանուր առմամբ նվազել են:


Գծապատկեր 8



Ուսումնասիրության շրջանակներում համեմատվել են ՀՀ-ում իրացված հայկական և իրանական արտադրության մետաղական ամրանների ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ միջին արժեքները:

Գծապատկեր 9-ի տվյալներից կարող ենք տեսնել, որ հայկական արտադրության մետաղական ամրանների մեծածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում ավելի բարձր են եղել՝ միջինում շուրջ 12-13 տոկոսով¹⁴:

Գծապատկեր 9




Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հայկական արտադրության մետաղական ամրանների միջին ամսական մանրածախ գները 2022 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ավելի ցածր է եղել՝ քան ներմուծված մետաղական ամրանների միջին ամսական մանրածախ գները, իսկ 2022 թվականի

¹⁴ Տեղական արտադրության մետաղական ամրանների միջին իրացման արժեքները հաշվարկվել են «Միկմետալ» ընկերության տվյալների հիման վրա:

հոկտեմբերից 2023 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում գները գրեթե նույնական են եղել:

Գծապատկեր 10



Համաձայն ստացված տեղեկատվության՝ ներմուծված ամրանի ինքնարժեքի շուրջ **80-85 տոկոսը կազմում է ձեռքբերման գինը**, որին ավելանում են մաքսային վճարները և բեռնափոխադրման ծախսերը:

Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծող ընկերությունների միջին եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի միջինում կազմել է շուրջ **տոկոս**:

4.4 ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

Ելնելով այն հանգամանքից, որ Իրանից ներմուծվող մետաղական ամրանների ծավալները էապես աճել են վերջին տարիներին, Հանձնաժողովը դիտարկել է Իրանից արտահանվող մետաղական ամրանների կառուցվածքը և ընդհանուր բնութագիրը:

Իրանը համարվում է համաշխարհային շուկայում պողպատ արտադրող տասը խոշորագույն երկրներից մեկը¹⁵, որը նաև առաջատար է պողպատից արտադրանքների արտադրության և արտահանման վարկանիշներում: Նման արդյունքներին նպաստել են հանքահումքային ռեսուրսների և էներգակիրների պաշարների առկայությունը և հասանելիությունը, լայն սպառողական շուկան, ինչպես նաև էժան աշխատուժը: Իրանի պողպատի արտադրողների ասոցիացիայի համաձայն՝ պողպատի արտադրության կարողությունը շարունակում է կտրուկ աճել և այժմ կազմում է տարեկան 45 մլն տոննա¹⁶: Պողպատե ամրանները ունեն ընդհանուր պողպատի և դրանից ավարտուն և կիսավարտուն արտադրանքների ամենամեծ մասնաբաժինը: Մասնավորապես, 2022 թվականին Իրանում արտադրվել է 10.4 մլն տոննա պողպատե ամրան, իսկ սպառումը, որն արտադրության և զուտ ներմուծման (ներմուծում - արտահանում) տարբերությունն է, կազմել է 8.09 մլն տոննա¹⁷: 2023 թվականի մարտ-նոյեմբեր ամիսներին արտադրվել է 7.25 մլն տոննա պողպատե ամրան, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցել է 20% աճ: Նույն ժամանակահատվածում սպառումը կազմել է 5.6 մլն տոննա¹⁸: 2024թ. ապրիլին պողպատե ամրանների արտադրությունը կազմել է 807 հզ տոննա¹⁹:

Իրանում արտադրված պողպատե ամրանները, բացի ներքին շուկայի պահանջարկը բավարարելուց, սպասարկում են նաև համաշխարհային շուկան:

¹⁵ Աղբյուրը՝ World Steel Association, <https://worldsteel.org/media/press-releases/2024/september-2024-crude-steel-production/>

¹⁶ Աղբյուրը՝ <https://www.steelradar.com/en/haber/iran-reaches-record-figures-in-steel-production-in-2023/>

¹⁷ Աղբյուրը՝ <https://financialtribune.com/articles/domestic-economy/118017/ismc-2023-highlights-headwinds-facing-iranian-steel-industry>


¹⁸ Աղբյուրը՝ <https://en.eghtesadonline.com/en/news/752177/rebar-accounts-for-lion%E2%80%99s-share-of%C2%A0finished-steel-production-exports>

<https://financialtribune.com/articles/domestic-economy/116770/rebar-accounts-for-lion-s-share-of-finished-steel-production>

¹⁹ Աղբյուրը՝ <https://www.steelradar.com/en/haber/the-future-price-of-iranian-steel-products-in-2024-growth-or-free-fall/>

Մետաղական ամրանների համաշխարհային շուկայում Իրանը հատկապես վերջին տարիներին համարվում է շուկայի խոշոր սպասարկող. 2022 թվականին մետաղական ամրանների համաշխարհային արտահանման կառուցվածքում վերջինիս կշիռը կազմել է 4.5 տոկոս, 2021 թվականին՝ 5 տոկոս: Արտահանման հիմնական շուկաներն են մերձավորարևելյան, հարավկովկասյան, Կենտրոնական Ասիայի, ինչպես նաև Արևելյան Ասիայի տարածաշրջանները:

Գծապատկեր 8



ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո գտնվող ապրանքների Իրանից արտահանման և Իրան ներմուծման շարժընթացը ներկայացված է Գծապատկեր 8-ում: Կարող ենք տեսնել, որ մինչև 2013 թվական ներմուծումը տատանողական է եղել, սակայն նշանակալի ծավալով է իրականացվել: Ներմուծման նման աճը պայմանավորող գործոններից են 2007 թվականից սկիզբ առած շինարարական խոշոր նախագծերը: Այնուհետև, 2010 թվականից հետո ներմուծման ալիքը մարել է և 2013-2022 թվականներին միջինում կազմել է 9 հազար տոննա: Արտահանման պարագայում, աճի հստակ միտումը սկսել է դիտվել 2011 թվականից սկսած՝ 2011-2017 թվականներին միջինում կազմելով 225 հազար տոննա, այնուհետև 2018 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճելով 3.4 անգամ, իսկ 2022 թվականին գրանցել է արտահանման ամենամեծ ծավալը՝ 2.2 մլն տոննա:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Իրանից մետաղական ամրանների արտահանման ծավալների աճը պայմանավորող գործոններից է Իրանում գործող պետական սուբսիդավորման մեխանիզմը:

Պողպատի ոլորտը Իրանական 6-րդ տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման պլանով (2017-2021թթ.) և ընթացիկ 20-ամյա տեսլականի փաստաթղթով (2005-2025թթ.) սահմանված է որպես առաջնահերթ ոլորտ: Իրանի պողպատի ոլորտը մեծապես վերահսկվում է կառավարության կողմից, որին պատկանում է բոլոր հանքերի և հարակից խոշոր ինստիտուտների

90%-ը: Իրանը ակտիվորեն ստեղծում է Հատուկ տնտեսական գոտիներ, առաջարկում է հարկային արտոնություններ պողպատի արտադրությամբ զբաղվող ընկերություններին: Ոլորտին տրամադրվող աջակցության ծրագրերից է Իրանի ազգային զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսական միջոցների տրամադրումը՝ ինչպես արտաբերության, այնպես էլ իրանական ռիալով, որոնք տրվում են արդյունաբերության ոլորտի տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ պողպատի ոլորտին²⁰:

Իրանը ակտիվորեն ստեղծում է Հատուկ տնտեսական Գոտիներ²¹, որոնք առաջարկում են հարկային արտոնություններ պողպատե ձեռնարկությունների համար (Iranian Mines), Արդյունաբերության նախարարության միջոցով խրախուսվում է հանքարդյունաբերության ոլորտում նոր ձեռնարկությունների ստեղծումը և զարգացումը²²: Արդյունաբերության, հանքերի և հանքարդյունաբերական ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման ծրագրի շրջանակներում պետության կողմից զգալի միջոցներ են ուղղվում ոլորտի զարգացման համար²³: Բացի այդ, ծրագրի շրջանակներում ոլորտում գործող տնտեսավարողներին տրամադրվում են դրամաշնորհներ՝ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար:

Ի թիվս վերոնշյալի, արդյունաբերական և հանքարդյունաբերական ոլորտները, որոնց թվին է պատկանում նաև պողպատի շրջանառության ոլորտը, Իրանում տնտեսության այն ոլորտներից են, որոնց դեռ թույլատրվում է Զարգացման 6-րդ ծրագրի 39-րդ հոդվածով²⁴ նախատեսված սուբսիդիաներ ստանալ, դրանցից են օրինակ՝ սուբսիդիաները ջրի և շուկայականից ցածր էլեկտրաէներգիա ձեռքբերելու համար:

Իրանի կառավարության կողմից մեծապես խրախուսվում է նաև արտահանումը:

Մասնավորապես, Իրանի հանքարդյունաբերության և առևտրի նախարարությունը, վերանայելով արտահանման մաքսատուրքերը, 2022 թվականի մայիսի 16-ից ամբողջությամբ չեղարկել է ամրանների և տաք գլանվաճքի մաքսատուրքերը²⁵: Իրանի կառավարությունը 2017 թվականին

²⁰ Աղբյուրը՝ Mercier, F. and L. Giua (2023), “Subsidies to the steel industry: Insights from the OECD data collection”, *OECD Science, Technology and Industry Policy Papers*, No.147, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/06e7c89b-en>

²¹ Government of Iran, Free and Special Zones | ایران ویژه و آزاد مناطق خدمات درگاه

²² Iranian Ministry of Industry, M. (2020), 1399 Annual Report

²³ Iranian Plan and Budget Organization (2020), 1399 Budget Law


²⁴ <https://irandataportal.syr.edu/annual-budgets-development-plans>

²⁵ Աղբյուրը՝ <https://www.kallanish.com/en/news/steel/market-reports/article-details/iran-revokes-export-duty-tariffs-on-rebar-hrc-0522/>

արտահանման նախատեսվող ծավալներն ավելացրել է տարեկան մինչև 20-25 մլն տոննայի (նախկին 10 մլն տոննայի փոխարեն)²⁶:

Հանձնաժողովի կողմից համեմատական վերլուծություն է կատարվել մետաղական ամրանների միջազգային բորսայական գների և Իրանից ՀՀ ներմուծված մետաղական ամրանների արժեքների միջև (տես՝ Գծապատկեր 9), ինչը ցույց է տվել, որ Դիտարկվող ժամանակահատվածում Իրանից ներմուծված ամրանների ձեռքբերման արժեքներն ավելի ցածր են եղել, քան մետաղական ամրանների միջին բորսայական արժեքները:

Գծապատկեր 9



Այսպիսով, այն հանգամանքը, որ Իրանից ներմուծված մետաղական ամրանների միջին արժեքը Դիտարկվող ժամանակահատվածում ավելի ցածր է եղել մետաղական ամրանների միջին բորսայական արժեքներից, կարող է, ի թիվս այլնի, պայմանավորված լինել այն գործոնով, որ Իրանում գործում են մետաղական ամրանների արտադրության և արտահանման պետական աջակցության ծրագրեր: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում իրականացվում է մետաղական ամրանների արտադրություն, կարևորվում է այն հանգամանքը, որ տեղական արտադրությունը չհայտնվի մրցակցային անհավասար պայմաններում: Ուստի Հանձնաժողովի կողմից իրականացվել է վերլուծություն, թե այլ հավասար պայմաններում, որքան է կազմում Իրանում արտադրված մետաղական ամրանների ինքնարժեքը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 1 տոննա մետաղական ամրանի արտադրության համար, այլ հավասար պայմաններում, էլեկտրաէներգիայի և

<https://www.globaltradealert.org/state-act/64031/iran-lower-export-tariff-on-rebar-hot-rolled-coil-and-billet>

²⁶ <https://www.reuters.com/article/iran-steel/iran-aims-for-annual-steel-exports-of-20-25-million-tonnes-by-2025-idINL8N1FY3KV/>

գազի սպառման ծավալը էապես չի տարբերվի, համեմատվել են ՀՀ-ում և Իրանում էներգակիրների արժեքները²⁷, ինչի արդյունքում ստացվել է, թե Իրանում 1 տոննա մետաղական ամրանի արտադրության համար որքան կկազմի էներգակիրներին ուղղված ծախսը:

Վերլուծության արդյունքում ստացվել է, որ այն դեպքում, երբ 2023 թվականին միավոր տոննա մետաղական ամրանի արտադրության համար էլեկտրաէներգիային ուղղված ծախսը ՀՀ-ում կազմել է **դրամ**²⁸, հաշվի առնելով Իրանում էլեկտրաէներգիայի համար գործող միջին սակագինը՝ Իրանում 1 տոննա մետաղական ամրանի համար սպառված էլեկտրաէներգիայի համար կատարված ծախսը կկազմեր **դրամ**: Միևնույն հաշվարկը կատարվել է նաև սպառված գազի համար, ինչի արդյունքում ստացվել է, որ այն դեպքում, երբ գազի սպառման ծախսը ՀՀ-ում կազմել է **դրամ**²⁹, Իրանում կկազմեր՝ **դրամ**:

Այսպիսով, արտադրության փուլում միայն էլեկտրաէներգիայի և գազի սպառման ծախսերի առումով ՀՀ-ում և Իրանում առկա է **29 042 դրամ** տարբերություն՝ 1 տոննա մետաղական ամրանի ինքնարժեքը ձևավորող բաղադրիչների բացվածքում:

Հանձնաժողովը, հաշվի առնելով Իրանում և ՀՀ-ում միջին աշխատավարձերի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը, կարևորել է նաև 1 տոննա մետաղական ամրանի ինքնարժեքում աշխատավարձի ծախսային բաղադրիչի ճշգրտման վերաբերյալ հաշվարկների իրականացումը:

Այսպես, ՀՀ-ում միավոր տոննա մետաղական ամրանի արտադրության դեպքում աշխատավարձին ուղղված ծախսերը կազմել են **դրամ**: Պարզելու համար, թե միևնույն արտադրության համար, այլ հավասար պայմաններում, Իրանում որքան կկազմեն աշխատավարձին ուղղված ծախսերը, դիտարկվել է Իրանի և ՀՀ-ի՝ ըստ գնողունակության պարիտետի ՀՆԱ-ն³⁰: Նշված ցուցանիշի հարաբերակցությունը Համաշխարհային բանկի 2023 թվականի տվյալների համաձայն կազմել է շուրջ **0,83** (Իրանում՝ 17 660 ԱՄՆ դոլար, ՀՀ-ում՝ 21 343 ԱՄՆ դոլար): Այսինքն, այն դեպքում, երբ ՀՀ-ում աշխատավարձին ուղղված ծախսերը

²⁷ <https://www.globalpetrolprices.com/Iran/>
<https://www.globalpetrolprices.com/Armenia/>

²⁸ Նախապատրաստվածքի ստացման փուլում կոմունալ ծախսերի **տոկոսը** կազմել են էլեկտրաէներգիային ուղղված ծախսերը, իսկ նախապատրաստվածքից ամրան ստացման փուլում՝ կոմունալ ծախսերի **տոկոսը**:

²⁹ Նախապատրաստվածքի ստացման փուլում կոմունալ ծախսերի **տոկոսը** կազմել են գազի սպառմանն ուղղված ծախսերը, իսկ նախապատրաստվածքից ամրան ստացման փուլում՝ կոմունալ ծախսերի **տոկոսը**:

³⁰ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.PP.CD>

միավոր տոննա մետաղական ամրանի արտադրության համար կազմել են դրամ, Իրանում կկազմեր շուրջ **դրամ՝ 2 763 դրամ** տարբերությամբ:

Այսպիսով, սրացվում է, որ միայն էներգակիրների և աշխատավարձին ուղղված ծախսերի մասով ՀՀ-ում արտադրված և Իրանում արտադրված միավոր տոննա մետաղական ամրանների ինքնարժեքում առկա է շուրջ 31 805 դրամ տարբերություն: Ինքնարժեքի մնացյալ բաղադրիչները՝ նյութածախս, ֆինանսական ծախսեր, մաշվածք և այլ ծախսեր, մոտարկվել են ՀՀ-ում արտադրության համապատասխան տվյալների հիման վրա: Այսինքն, Հանձնաժողովի կողմից հաշվարկվել է, թե նշված ծախսերը ՀՀ-ում արտադրության դեպքում ինքնարժեքի ինչ մասնաբաժին են կազմում, և ստացված ցուցանիշը մոտարկվել է իրանական արտադրության համար: Տվյալ դեպքում որպես Իրանում արտադրված մետաղական ամրանի ինքնարժեքի հաշվարկման հիմք է ընդունվել 2023 թվականին Իրանից ՀՀ մետաղական ամրանների արտահանման միջին գինը 1 տոննայի համար՝ համարժեք 189 033 ՀՀ դրամին³¹: Այստեղ կարևոր է ընդգծել, որ այն հանդիսանում է Իրանից ՀՀ արտահանված մետաղական ամրանի ինվոյսային արժեքը, **և իր մեջ արդեն իսկ պարունակում է իրանական արտադրողի մարժան:**

Վերոգրյալ վերլուծության արդյունքում Իրանում արտադրված միավոր տոննա մետաղական ամրանների ինքնարժեքի վերաբերյալ կատարված հաշվարկները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9

Մետաղական ամրանների ինքնարժեքը ՀՀ-ում և Իրանում

Ամրանի արտադրության ինքնարժեք՝ 1 տոննայի հաշվով		ՀՀ	Իրան
1	Նյութածախս՝		
2	Կոմունալ ծախսեր		
2.1	հոսանք		
2.2	գազ		
2.3	այլ		
3	Ֆինանսական ծախսեր		
4	Աշխատավարձ		
5	Մաշվածք		
6	Այլ ծախսեր		
Իրանից ՀՀ արտահանված մետաղական ամրանների միջին հաշվարկային եկամտաբերություն՝ ըստ ինքնարժեքի			

³¹ Հաշվարկների աղբյուրը՝ Tehran Chamber of Commerce, Industries, Mines and Agriculture՝ <https://service.tccim.ir/>

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ ստացվել է, որ Իրանոմ արտադրված մետաղական ամրանի ինքնարժեքը կազմել է շուրջ դրամ՝ շուրջ **28 տոկոսով ավելի ցածր**, քան ՀՀ-ում արտադրության ինքնարժեքն է: Իրանից ՀՀ արտահանված մետաղական ամրանների միջին հաշվարկային եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի կազմել է առնվազն շուրջ դրամ՝ միավոր տոննայի համար:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել են 2023 թվականին Իրանից արտահանված մետաղական ամրանների ծավալները և միավոր տոննայի արժեքները՝ ըստ արտահանման երկրների (տես՝ Աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Իրանից ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո դասվող ապրանքների արտահանման կառուցվածքը 2023 թվականին³²

Հ/հ	Արտահանման երկիր	Արտահանման ծավալ /տոննա/	Մասնաբաժին	1 տոննա ամրանի միջին գին /ԱՄՆ դոլար/
1	Իրաք	1,451,736	68%	487
2	ՀՀ	129,332	6%	481
3	Թուրքիա	90,470	4%	474
4	Տաջիկստան	77,975	4%	483
5	ԱՄԷ	76,874	4%	458
6	Վրաստան	75,688	4%	482
7	Թուրքմենստան	62,996	3%	496
8	Պակիստան	62,495	3%	506
Այլ		97,741	5%	493
Ընդամենը		2,125,307	100%	486

Այսպիսով, Այուսակ 10-ի տվյալներից կարող ենք տեսնել, որ 2023 թվականին Իրանից արտահանված ԱՏԳ ԱԱ 7214 կոդի ներքո դասվող ապրանքատեսակների 68 տոկոսը արտահանվել է Իրաք, որին հաջորդում է ՀՀ-ն՝ 6 տոկոս մասնաբաժնով: Իրանից մետաղական ամրանների արտահանման միջին արժեքը տոննայի հաշվով կազմել է 486 ԱՄՆ դոլար, ՀՀ արտահանված մետաղական ամրանների դեպքում՝ 481 ԱՄՆ դոլար:

Հանձնաժողովի կողմից իրականացվել է վերլուծություն, թե որքան է կազմում Իրանից արտահանվող մետաղական ամրանների միջին

³² Աղբյուրը՝ <https://service.tccim.ir/>

եկամտաբերությունը (ըստ ինքնարժեքի)՝ ըստ արտահանման երկրների (տես՝ Աղյուսակ 11):

Ինչպես կարող ենք տեսնել Աղյուսակ 11-ի տվյալներից, ԱՄԷ արտահանվող մետաղական ամրանների միջին արժեքը ցածր է եղել ՀՀ արտահանվող մետաղական ամրանների արժեքից՝ շուրջ 9 000 դրամով (կամ շուրջ 7 տոկոսով):

Աղյուսակ 11

Իրանից արտահանված մետաղական ամրանների միջին հաշվարկային եկամտաբերությունը (ըստ ինքնարժեքի)՝ ըստ երկրների

Արտահանման երկիր	Իրանից արտահանման արժեք /համարժեք ՀՀ դրամ/	Իրանից արտահանված մետաղական ամրանների եկամտաբերությունը
ՀՀ	189,033	
Իրաք	191,391	
ԱՄԷ	179,994	
Պակիստան	198,858	

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ-ում իրացվող ամենաբարձր գին ունեցող մետաղական ամրանները Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված մետաղական ամրաններն են, որոնց ներմուծման միջին արժեքը՝ Պետական եկամուտների կոդմիտեի տվյալների համաձայն, 2023 թվականին կազմել է շուրջ **հազար** դրամ՝ 1 տոննայի համար (Իրանից ներմուծման միջին մաքսային արժեքը կազմել է **հազար** դրամ): Նշենք, որ ՀՀ-ում արտադրված մետաղական ամրանների ինքնարժեքը 2023 թվականին կազմել է շուրջ **հազար** դրամ:

Հավելենք նաև, որ հայկական արտադրության մետաղական ամրանների՝ արտադրությունից մինչև վերջնական իրացման փուլի եկամտաբերությունը (այն է՝ «Ասկե Գրուպ» և «Միկմետալ» ընկերությունների միջին եկամտաբերությունների գումար)՝ ըստ ինքնարժեքի կազմել է՝ 2023 թվականին՝ **տոկոս** (տոկոս և տոկոս), իսկ 2022 թվականին՝ **տոկոս** (տոկոս և տոկոս):

Իրանական արտադրության մետաղական ամրանների ՀՀ-ում իրացման դեպքում միջին եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի (արտադրության եկամտաբերության և ներմուծող ընկերությունների միջին եկամտաբերության՝ համապատասխանաբար տոկոս և տոկոս, գումար) 2023 թվականին միջինում կազմել է առնվազն **տոկոս**:

Այսպիսով ստացվում է, որ չնայած 2023 թվականին հայկական արտադրության մետաղական ամրանների իրացման եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի **առնվազն 8 տոկոսով** ավելի ցածր է եղել, քան իրանական արտադրության մետաղական ամրաններինը, ՀՀ շուկայում իրացվող հայկական

արտադրության մետաղական ամրանների գները այնուամենայնիվ ավելի բարձր են եղել իրանական արտադրության մետաղական ամրանների իրացման գներից:

ՀՀ-ում 2022-2023 թվականներին իրացված մետաղական ամրանների միջին իրացման գները (առանց ԱԱՀ)³³ ըստ տնտեսավարող սուբյեկտների և ըստ մետաղական ամրանների ծագման երկրի, ներկայացված են ստորև աղյուսակներով³³:

	Հ/հ	Տնտեսավարող սուբյեկտ	Իրացման ծավալ /տոննա/	Միավոր տոննայի միջին գին /դրամ, առանց ԱԱՀ/	Ծագման երկիր	Իրացման միջին գնի տարբերությունը հայկական արտադրության իրացման միջին գնի համեմատ
2022	1	«ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲԸ				
	2	«ԱՐԿԱԹ» ՍՊԸ				
	3	«ԱԳ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ				
	4	«ՄԵՏԱԼ ԳՈՐԽՊ» ՍՊԸ				
	5	ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶ				
	6	«ՍՊԱՐՏ» ՍՊԸ				
	7	«ԱՌԱՆՅՔ» ՍՊԸ				
	8	«ԱՎ ՄԵՏԱԼ» ՍՊԸ				

	Հ/հ	Տնտեսավարող սուբյեկտ	Իրացման ծավալ /տոննա/	Միավոր տոննայի միջին գին /դրամ, առանց ԱԱՀ/	Ծագման երկիր	Իրացման միջին գնի տարբերությունը հայկական արտադրության իրացման միջին գնի համեմատ
2023	1	«ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲԸ				
	2	«ԱՐԿԱԹ» ՍՊԸ				
	3	«ԱԳ ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ				
	4	«ՄԵՏԱԼ ԳՈՐԽՊ» ՍՊԸ				
	5	«ԱՌԱՆՅՔ» ՍՊԸ				
	6	«ԱՎ ՄԵՏԱԼ» ՍՊԸ				
	7	«ՄԱՐԿԵՏ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ				
	8	ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԶ				
	9	«ՍՊԱՐՏ» ՍՊԸ				

Այսպիսով, իրանական ծագման մետաղական ամրանների իրացման միջին կշռված գները հայկական արտադրության մետաղական ամրանների գներից միջինում 2022 թվականին ցածր են եղել մոտ 22 հազար դրամի չափով (-6 տոկոս), իսկ 2023 թվականին միջինում՝ 10 հազար դրամի չափով (-4 տոկոս): Իրանական և հայկական արտադրության մետաղական ամրանների միջին իրացման գների տարբերությունը ըստ առանձին տնտեսավարող սուբյեկտների 2022 թվականին որոշ դեպքերում հասնում է մինչև տոկոս (ավելի քան դրամ), իսկ 2023 թվականին՝ (ավելի քան դրամ):

³³ Հաշվարկվել է տնտեսավարող սուբյեկտների հաշիվ ապրանքագրերի տվյալների հիման վրա:

ՌԴ և ՀՀ արտադրված մետաղական ամրանների իրացման միջին գների տարբերությունը 2023 թվականին 2022 թվականի համեմատ նվազել է: Այն դեպքում, երբ 2022 թվականին ՌԴ ծագում ունեցող մետաղական ամրանները ՀՀ-ում իրացվել են շուրջ 33 600 դրամ ավելի բարձր գնով, քան հայկականը, ապա 2023 թվականին տարբերությունը կազմել է շուրջ 6 900 դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել ներքին շուկայի պաշտպանության միջոցառման կիրառման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, որպեսզի Իրանում մետաղական ամրանների արտադրության և արտահանման խրախուսմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի կիրառման պայմաններում, ՀՀ-ում արտադրվող մետաղական ամրանների և իրանական արտադրության մետաղական ամրանների իրացման համար ապահովվեն հավասար մրցակցային պայմաններ:

Միաժամակ, առաջարկում ենք միջոցառման կիրառման անհրաժեշտության պարագայում հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ՌԴ ծագում ունեցող մետաղական ամրանների իրացման միջին գները նվազել են, այնուամենայնիվ ՀՀ-ում իրացվող մետաղական ամրանների շրջանում առավել բարձր գին ունեցել են ՌԴ ծագման մետաղական ամրանները, իսկ ամենացածր գինը՝ իրանական ծագման մետաղական ամրանները, ուստի այս պարագայում, համապատասխան միջոցառումների կիրառման դեպքում, կարևորվում է ՌԴ ծագման մետաղական ամրանների գների դիտարկումը՝ որպես առավելագույն շեմի ուղենիշ:

4.5 ՓՈԽԱՐԺԵՔԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՎՐԱ

Հանձնաժողովի կողմից համապատասխան վերլուծություն է կատարվել նաև գնահատելու համար Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ոլորտում:

Ընտրված փոփոխականների միջև կախվածությունը հաշվարկվել է Պիրսոնի կորելյացիայի գործակցի միջոցով, որն ունի հետևյալ բանաձևը.

$$r_{xy} = \frac{\sum (x_i - \bar{x}) \times (y_i - \bar{y})}{\sqrt{\sum (x_i - \bar{x})^2 \times \sum (y_i - \bar{y})^2}},$$

որտեղ՝ x_i առաջին փոփոխականի արժեքն է, y_i երկրորդ փոփոխականի արժեքն է, \bar{x} առաջին փոփոխականի միջին թվաբանականն է, \bar{y} երկրորդ փոփոխականի միջին թվաբանականն է: r_{xy} -ի արժեքները տատանվում են -1-ից մինչև +1-ի միջակայքում: Եթե r_{xy} -ի արժեքը -1-ին կամ +1-ին մոտ է, նշանակում է, որ ցուցանիշների միջև կախվածությունն ուժեղ է: Եթե գործակիցը բացասական է, նշանակում է, որ մեծությունների միջև առկա է հակադարձ համեմատական կախվածություն, իսկ դրական արժեքի պարագայում ցուցանիշների միջև կախվածությունն ուղիղ է:

Նախ գնահատվել է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի ազդեցությունը ամրանների արտադրության ինքնարժեքի վրա, ինչը ցույց է տվել, որ առկա է ոչ էական շատ փոքր դրական կախվածություն՝ $r = 0,06321$: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ամրանների ինքնարժեքի կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում տեղական հումքը և մնացյալ ծախսերը, այլ ոչ թե ներմուծված հումքը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում արտադրված ամրանները իրացվում են ՀՀ ներքին շուկայում՝ դրամով:

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի ազդեցությունը Իրանից ներմուծված ամրանների ներմուծման միջին արժեքի վրա ցույց է տվել, որ նշված փոփոխականների միջև առկա է էական դրական կախվածություն՝ $r = 0,8753$: Սա նշանակում է, որ ՀՀ դրամի 1 միավոր արժեզրկումը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցնում է Իրանից ամրանների ներմուծման գնի 0,8753 միավորով ավելացման, և հակառակը: Այս պարագայում իրացման գինը ձևավորվում է ԱՄՆ դոլարով, ինչի արդյունքում իրանական մետաղական ամրանների գներն ավելի զգայուն են դառնում փոխարժեքի փոփոխության նկատմամբ:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ Դիտարկվող ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը ուղղակի

ազդեցություն չի ունեցել տեղական արտադրության մետաղական ամրանների գների վրա, քանի որ տեղական արտադրության հումքի մեծ մասը ՀՀ-ից է ձեռք բերվում, այնուամենայնիվ նշված հանգամանքը կարող էր բացասական ազդեցություն ունենալ տեղական արտադրության մետաղական ամրանների գնային մրցունակության վրա: Մասնավորապես, Իրանից մետաղական ամրանները ձեռք են բերվում ԱՄՆ դոլարով, ուստի ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորման դեպքում, այլ հավասար պայմաններում ՀՀ-ում նվազում է Իրանից ներմուծված մետաղական ամրանների միջին ձեռքբերման գինը, ինչի արդյունքում կարող է բարձրանալ իրանական արտադրանքի գնային մրցունակությունը ՀՀ շուկայում՝ ի համեմատ տեղական արտադրության մետաղական ամրանների:

Այլ գործոնների ազդեցությունը մետաղական ամրանների գների վրա

«Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնի կողմից ամրանների գնագոյացումը բացահայտելու համար դիտարկվել են այնպիսի գործոններ, ինչպիսիք են դոլար/դրամ և ռուբլի/դրամ փոխարժեքը, ամրանների միջազգային գները, ՀՀ շինարարության ոլորտի աճը և գները: Վերջիններիս աղբյուրները և վիճակագրական բնութագրիչները ներկայացված են Աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13

Վիճակագրական վերլուծության համար կիրառված տվյալների բնութագրիչներն ու աղբյուրները

	Չափման միավորը	Նվազ.	Միջին	Առավել.	Ստ. շեղում	Աղբյուրը
ՀՀ -ում արտադրված ամրաններ	ՀՀ դրամ տոննայի դիմաց	215.0	259.6	300.0	28.9	ՀՀ ՖՆ
ՌԴ-ում արտադրված ամրաններ	ՀՀ դրամ տոննայի դիմաց	270.5	359.3	541.8	70.0	ՀՀ ՖՆ
Ռուբլի/դրամ	-	4.0	6.5	8.5	1.2	ՀՀ ԿԲ
Դոլլար/Դրամ	-	386.2	457.9	527.7	45.1	ՀՀ ԿԲ
Ամրանների միջազգային գներ	ԱՄՆ դոլար տոննայի դիմաց	398.8	578.6	935.8	118.9	Investing.com
Շինարարության ոլորտի ինդեքս	2018/1=100	241.5	500.9	709.0	80.9	ՀՀ ՎԿ
Շինարարության գների ինդեքս	2018/1=100	93.6	112.2	128.6	13.1	ՀՀ ՎԿ

Այնուհետև դիտարկվել է յուրաքանչյուր գործոնի կորելացիան ամրանների գների հետ: Ինչպես ներկայացված է Աղյուսակ 14-ում, ՀՀ-ում արտադրված ամրանների գները նշանակալիորեն դրական են կորելացված ինչպես ՌԴ-ում արտադրված ամրանների գների հետ, այնպես էլ միջազգային գների հետ: Միաժամանակ, դրանք դրական են կորելացված նաև ՀՀ շինարարության ոլորտի և գների մակարդակի հետ:

ՌԴ-ից ներմուծված ամրանների գները կորելացված են միայն միջազգային գների և դոլարի փոխարժեքի հետ:

Աղյուսակ 14


Ամրանների գների հետ գործոնների կախվածությունը

	ՀՀ -ում արտադրված ամրաններ	ՌԴ-ից ներմուծված ամրաններ
ՀՀ -ում արտադրված ամրաններ	1.00	0.62***
ՌԴ-ում արտադրված ամրաններ	0.62***	1.00
Ռուբլի/դրամ	-0.19	0.12
Դոլար/Դրամ	-0.33	0.25*
Ամրանների միջազգային գներ	0.76***	0.78***
Շինարարության ոլորտի աճը ՀՀ-ում	0.28**	-0.12
Շինարարության գները ՀՀ-ում	0.58***	0.40

Տեղական արտադրություն: Նախ և առաջ, համադրվել են ՀՀ-ում արտադրված ամրանների և ամրանների միջազգային բորսայական գները՝ բերված դրամային արտահայտության: Պետք է նշել, գների մակարդակները համադրելի չեն՝ որակական պարամետրերի և ստանդարտների հնարավոր անհամադրելիության պատճառով: Այնուամենայնիվ, գների դինամիկան համադրելի է և առկա է էական կորելացիա (0.6-ի շրջանակներում):

Գծապատկեր 11


ՀՀ-ում արտադրված ամրանների և ամրանների միջազգային բորսայական գինը, հզ ՀՀ դրամ տոննայի դիմաց



ՌԴ-ից ներմուծված ամրաններ: Անդրադառնանք ՌԴ-ից ներմուծված ամրանների գնագոյացմանը: Ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 13-ից, ՌԴ-ից ներմուծված ամրանների միջին գների շարժընթացը կորելացված է ինչպես ՌԴ-ում ձևավորվող գներին, այնպես էլ միջազգային գներին՝ ճշգրտված փոխարժեքով:

Գծապատկեր 13

ՌԴ-ից ներմուծված ամրանների և ՌԴ-ում ամրանների գնի շարժընթացը, հազար ՀՀ դրամ³⁴



³⁴ ՌԴ-ում մետաղական ամրանների գների աղբյուրը՝ <https://gostmetal.ru/dinamika/>

**ԳԼՈՒԽ 5. ՀՀ-ՈՒՄ ՍԵՎ ՄԵՏԱՂԻ ԶԱՐԴՈՆԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ
ԿԻՍԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

Ինչպես արդեն նշվել է, Կառավարության թիվ 727-Ն որոշմամբ սահմանվել է սև մետաղների և սև մետաղների ջարդոնների Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք՝ մինչև 2025 թվականի հունվարի 30-ը: Նշված արգելքի նպատակը եղել է, ի թիվս այլնի, սև մետաղներից պատրաստված, օգտագործված ապրանքների արտահանումը կանոնակարգելը, տեղական արտադրությունը զարգացնելը և հումքային բազայով ապահովելը, ինչպես նաև նոր ներդրումների միջոցով Հայաստանի Հանրապետության մշակող արդյունաբերության ոլորտի գործունեությունը խթանելը:

Միաժամանակ 2024 թվականի փետրվարի 7-ի ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-85-Ն օրենքի հոդված 1-ի համաձայն, ի թիվս այլնի, ԱՏԳ ԱԱ 7206 (Երկաթ և չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով (բացի 7203 ապրանքային դիրքի երկաթից)), ԱՏԳ ԱԱ 7207 (կիսապատրաստուկներ՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից) և ԱՏԳ ԱԱ 7224 (այլ պողպատ՝ լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով. կիսապատրաստուկներ՝ այլ լեգիրված պողպատից) ծածկագրին դասվող ապրանքների յուրաքանչյուր մեկ տոննայի արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների, սահմանվում է տուրք՝ բազային տուրքի 110-ապատիկի չափով: Օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովի կողմից վերլուծություն է իրականացվել գնահատելու նշված սահմանափակումների հնարավոր ազդեցությունը ոլորտի հետագա զարգացումների վրա:


Նախևառաջ ուսումնասիրվել է այն պոտենցիալ պահանջարկը, որը կարող է առկա լինել ՀՀ-ում մետաղից ստացված արտադրատեսակների նկատմամբ: Այս համատեքստում ուսումնասիրվել է մետաղական ամրանների՝ որպես մետաղից ստացվող առավել լայն սպառում և պահանջարկ ունեցող ապրանքատեսակի նկատմամբ ձևավորվող պահանջարկի վրա ազդող գործոնները:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մետաղական ամրանների նկատմամբ պահանջարկը նախևառաջ պայմանավորված է շինարարության ոլորտում տեղի

ունեցող զարգացումներով: Ուստի ուսումնասիրվել են ՀՀ-ում շինարարության ոլորտի ծավալները և փոփոխությունները երկարաժամկետ կտրվածքով:

Գծապատկեր 14

ՀՀ շինարարության ծավալների շարժընթացը



Ինչպես կարող ենք տեսնել Գծապատկեր 14-ի տվյալներից, 2020-2024 թվականներին ՀՀ-ում տեղի է ունեցել շինարարության ծավալների աճ՝ առավելագույնին հասնելով 2024 թվականին: Նշված հանգամանքին, ի թիվս այլ հնարավոր գործոնների, կարող էր նպաստել նաև այն, որ Կառավարության կողմից խթանվում էր հիպոթեքային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձի ծրագիրը, այնուհետև նաև՝ այդ ծրագրի աստիճանական դադարեցումը: **Նշված քաղաքականությունը կարող էր շինարարության ոլորտի ներկա պահանջարկը (2023 - 2024 թվականներ) որոշակիորեն ավելացնել՝ ի հաշիվ հետագա տարիների պահանջարկի նվազման:**

Շինարարության ծավալի 2021-2024 թվականների տարեկան միջին արժեքը գերազանցել է 2009-2020 թվականների տարեկան միջին արժեքին **շուրջ 35 տոկոսով:**

2023-2024 թվականներին շինարարության ծավալների աճով պայմանավորված աճել են նաև մետաղական ամրանների սպառման ծավալները:

Հավելենք նաև, որ մետաղական ամրաններ արտադրող «Ասկե Գրուպ» ընկերությունը որոշակի ծավալով արտադրում է նաև **մետաղական աղացող գնդեր:** Մետաղական աղացող գնդերը հիմնականում օգտագործվում են հանքարդյունաբերության ոլորտում: Ըստ ուսումնասիրության՝ սև մետաղներից և


սև մետաղական ջարդոններից ՀՀ-ում մետաղական ամրաններից և մետաղական աղացող գնդերից բացի այլ ապրանքատեսակ չի արտադրվում, որը կունանար համեմատաբար լայն սպառում և պահանջարկ: Ընդ որում, նշված արտադրատեսակների ծավալի մեջ ավելի քան 91 տոկոսը կազմում է հենց մետաղական ամրանը: Այսպիսով, Հանձնաժողովի կողմից հաշվարկվել է 2022-2024 թվականներին մետաղական ամրանների և մետաղական աղացող գնդերի սպառման ծավալները ՀՀ-ում, ինչի նպատակով դիտարկվել է նշված արտադրատեսակների ինչպես արտադրության, այնպես էլ ՀՀ ներմուծման ծավալները:

Աղյուսակ 15

**2022-2024 թվականներին իրացված մետաղական ամրանների և
մետաղական աղացող գնդերի ծավալները**

Անվանում	2022 թվական		2023 թվական		2024 թվական	
	Մետաղական ամրաններ	Աղացող մետաղական գնդեր	Մետաղական ամրաններ	Աղացող մետաղական գնդեր	Մետաղական ամրաններ	Աղացող մետաղական գնդեր
	տոննա		տոննա		տոննա	
Արտադրություն, այդ թվում՝	88,947	9,816	104,113	5,412	85,303	3,653
Ներմուծում	118,014	18,129	156,981	20,227	196,802	24,375
Ընդամենը	206,961	27,945	261,094	25,639	282,105	28,028
	234,906		286,733		310,133	

ՀՀ-ում մետաղական ամրանների արտադրության ներուժը գնահատելու համար կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ 2024 թվականին ՀՀ-ից արտահանվել է 53 հազար տոննա ԱՏԳ ԱԱ 7207 ծածկագրի ներքո դասակարգվող պողպատե կիսապատրաստուկներ, որոնցից կարող էր արտադրվել մետաղական պատրաստի արտադրանք: Պողպատե կիսապատրաստուկների արտահանման ծավալը 2024 թվականին 2023 թվականի համեմատ աճել է **շուրջ 2,6 անգամ** (տես՝ Գծապատկեր 15):




Այսպիսով, 2023 թվականին ՀՀ-ում սպառվել է 261 հազար տոննա մետաղական ամրան, որից 104 հազարը տեղական արտադրության, իսկ 157 հազարը՝ ներմուծված: 2024 թվականին ՀՀ-ում սպառվել է 282 հազար տոննա մետաղական ամրան, որից 85 հազարը տեղական արտադրության, իսկ 197 հազարը՝ ներմուծված:

Ինչ վերաբերում է պողպատե աղացող գնդերին, ապա 2023 թվականին ՀՀ-ում սպառվել է 25,6 հազար տոննա պողպատե աղացող գունդ, որից 5 հազարը տեղական արտադրության, իսկ 20 հազարը՝ ներմուծված: 2024 թվականին ՀՀ-ում սպառվել է 28 հազար տոննա պողպատե աղացող գունդ, որից 4 հազարը տեղական արտադրության, իսկ 24 հազարը՝ ներմուծված:


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ծավալները, հետևաբար և մետաղական ամրանների շրջանառության ծավալը առավելագույն մակարդակին է հասել 2024 թվականին, ինչը հետագա տարիներին կարող է նվազման միտում ունենալ՝ պայմանավորված շինարարության ոլորտի խթանմանը նպաստող պետական քաղաքականության դադարեցման հետ, ուստի Հանձնաժողովի կողմից համեմատական վերլուծություն է իրականացվել շինարարության ոլորտի մինչվերելքային փուլի շրջանում ՀՀ-ում իրացվող մետաղական վերջնական արտադրատեսակների սպառման ծավալները գնահատելու նպատակով: Հաշվարկվել է 2020 թվականին ՀՀ-ում արտադրված և

ՀՀ ներմուծված մետաղական ամրանների և պողպատե աղացող գնդերի ծավալը, ինչը կազմել է շուրջ 121 հազար տոննա: 2024 թվականին ՀՀ-ում արտադրված և ներմուծված մետաղական ամրանների և մետաղական աղացող գնդերի ծավալը կազմել է շուրջ 310 հազար տոննա, որը 2020 թվականի նույն ցուցանիշը գերազանցել է 155 տոկոսով (տես՝ Գծապատկեր 16): Ընդ որում, 2024 թվականին ՀՀ-ից արտահանվել է շուրջ 53 հազար տոննա պողպատե կիսապատրաստուկ: Կիսապատրաստուկի արտահանման սահմանափակման և ՀՀ-ում մետաղական վերջնական արտադրատեսակ արտադրելու պայմաններում էլ ավելի է մեծանում ՀՀ-ում պատրաստի վերջնական մետաղական արտադրանքի առաջարկը շուկայում:

Գծապատկեր 16



Հարկ է նշել, որ Գծապատկեր 16-ում ներկայացված է ինչպես արտադրված, այնպես էլ ներմուծված արտադրատեսակների ծավալը: Միայն արտադրությունը դիտարկելու պայմաններում կստանանք հետևյալ պատկերը:



Ինչպես կարող ենք տեսնել Գծապատկեր 17-ի տվյալներից՝ 2024 թվականին արտադրված վերջնական մետաղական արտադրանքի ծավալը 2020 թվականի ցուցանիշը գերազանցել է 58 տոկոսով: Բացի այդ, 2024 թվականին արտադրված վերջնական արտադրատեսակների մոտ 60 տոկոսի չափով արտադրվել է նաև պողպատե կիսապատրաստուկ:

Հանձնաժողովի կողմից իրականացվել է վերլուծություն՝ գնահատելու համար ՀՀ-ում արտադրական ներուժը մետաղական պատրաստի վերջնական արտադրանք ստանալու տեսանկյունից: Այս առումով Հանձնաժողովը դիտարկել է ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների ամսական առավելագույն արտադրության ծավալը՝ ըստ առանձին արտադրատեսակների և պողպատե կիսապատրաստուկների (տես՝ Աղյուսակ 16):

Աղյուսակ 16


Տնտեսավարող սուբյեկտների գնահատված առավելագույն արտադրական ծավալը՝ ըստ առանձին արտադրատեսակների և կիսապատրաստուկի

Հ/հ	Տնտեսավարող սուբյեկտ	Առավելագույն ամսական ցուցանիշ /տոննա/
Մետաղական ամրանի արտադրություն		
1	«Ասկե Գրուպ» ԲԲԸ	
Պողպատե աղացող գնդերի արտադրություն		
1	«Ասկե Գրուպ» ԲԲԸ	
2	«Ձուլակենտրոն» ԲԲԸ	
Պողպատե կիսապատրաստուկների արտադրություն		
1	«Տ-Մետալ» ՓԲԸ	
2	«Ձուլակենտրոն» ԲԲԸ	
3	«Քարակերտի քարածուլման գործարան» ԲԲԸ	
4	«Սանն Մետ» ՓԲԸ*	
5	«Ջմետալ թրեյդինգ կոմպանի» ՍՊԸ*	
Ընդամենը, ամսական առավելագույն		27,914
Ընդամենը, տարեկան առավելագույն		334,965

*

Իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ տնտեսավարող սուբյեկտների՝ մետաղական պատրաստի արտադրանք և կիսապատրաստուկ ստանալու առավելագույն ամսական ցուցանիշը կազմել է մոտ 28 հազար տոննա, ինչը տարեկան կտրվածքով կազմում է մոտ **335 հազար տոննա**:

Միաժամանակ իրականացվել է վերլուծություն՝ գնահատելու համար ՀՀ-ում մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի նկատմամբ առկա պահանջարկի ծավալը: Այս նպատակով ուսումնասիրվել է վերջին հինգ տարիների ընթացքում՝ 2020-2024 թվականներին, ՀՀ-ում սպառված մետաղական ամրանների և մետաղական աղացող գնդերի ծավալը (արտադրություն և ներմուծում): Ինչպես կարող ենք տեսնել Գծապատկեր 18-ի տվյալներից՝ տարեկան միջին սպառման ծավալը կազմել է մոտ **223 հազար տոննա**:



Այսպիսով, ստացվում է, որ այն պարագայում, եթե տնտեսավարող սուբյեկտները՝ օգտագործելով իրենց արտադրական կարողությունները, իրականացնեն մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի արտադրություն ամբողջ հզորությամբ, ապա միայն արտադրությունը շուրջ **112 հազար տոննայով** կգերազանցի վերջնական արտադրատեսակների նկատմամբ առկա միջին պահանջարկը: Ներմուծման ծավալների դիտարկման պարագայում շուկայում առաջարկի և պահանջարկի միջև տարբերությունը էլ ավելի կմեծանա:

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք նշել, որ.

1. Մետաղական ամրանների նկատմամբ պահանջարկը ձևավորող հիմնական գործոնը հանդիսանում է ՀՀ-ում շինարարության ոլորտի ծավալը: ՀՀ-ում շինարարության ոլորտի ծավալը համեմատաբար կայուն և ընդհանուր առմամբ նվազող է եղել 2009-2020 թվականներին: 2020 թվականից սկսած աճել է շինարարության ոլորտի ծավալը՝ առավելագույնին հասնելով 2023-2024 թվականներին, ինչը հիմնականում կարող է պայմանավորված լինել եկամտային հարկի ետվերադարձի քաղաքականության կիրառմամբ և չի կարող շարունակական բնույթ կրել: Նշվածից կարելի է եզրակացնել, որ հետագա տարիներին, եկամտային հարկի վերադարձի քաղաքականության աստիճանական դադարեցման պարագայում, կնվազի նաև շինարարության

ոլորտի ծավալը, ինչն էլ կհանգեցնի մետաղական ամրանների նկատմամբ 2023-2024 թվականներին ձևավորված պահանջարկի նվազմանը:

2. 2020-2024 թվականներին շինարարության ոլորտի ծավալը 2009-2019 թվականների միջին տարեկան ծավալի համեմատ աճել է շուրջ 35 տոկոսով:

3. Տնտեսավարող սուբյեկտների՝ մետաղական պատրաստի արտադրանք և կիսապատրաստուկ ստանալու առավելագույն տարեկան ցուցանիշը կազմում է մոտ **335 հազար տոննա**, այն պարագայում, երբ վերջին հինգ տարիների ընթացքում մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի նկատմամբ առկա միջին պահանջարկը կազմել է մոտ **223 հազար տոննա**:

Այսպիսով մետաղական վերջնական պատրաստի արտադրանքի խթանմանն ուղղված քաղաքականության և շուկայում նոր տնտեսավարող սուբյեկտների ավելացմանը զուգընթաց ավելանում է նաև մետաղական վերջնական արտադրատեսակների առաջարկը << շուկայում:

Այս պարագայում, մետաղական ամրանների ձևավորվող առաջարկը զգալիորեն կարող է գերազանցել գնահատված միջին պահանջարկին, ինչը կհանգեցնի տեղական հումքի արագ սպառման և մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի ավելցուկային շուկայի ստեղծման:

Ուստի առաջարկվում է դիտարկել համապատասխան միջոցառումների կիրառման հնարավորությունը, որպեսզի ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտները խուսափեն ավելցուկային շուկայում հայտնվելու ռիսկից, միևնույն ժամանակ նվազեցնելով նաև տեղական հումքի արագ սպառման ռիսկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ապրանքային շուկայի կառուցվածքի վերաբերյալ.

1. Հանձնաժողովը տվյալ ուսումնասիրության շրջանակներում հատկորոշել է «Մետաղական ամրաններ» ապրանքային շուկան, որի ապրանքատեսակային սահմանը ներառում է մետաղական ամրանների ողջ տեսականին, իսկ աշխարհագրական սահմանը՝ ՀՀ ողջ տարածքը:

2. 2023 թվականին ՀՀ մետաղական ամրանի ներմուծման ծավալներն աճել են **շուրջ 34 տոկոսով** և կազմել 150 հազար տոննա: 2023 թվականին ամրանի ներմուծումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների թվաքանակը ևս ավելացել է՝ **177-ից հասնելով 209-ի:**

3. 2023 թվականի ընթացքում մետաղական ամրանների առավել մեծ քանակի ներմուծումներ իրականացրել են «Արկաթ» և «ԱԳ Իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ ընդհանուր ներմուծման ծավալների համապատասխանաբար **տոկոսը և տոկոսը:**

4. 2022 թվականին Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը «Մետաղական ամրան» ապրանքային շուկայի **ներմուծման տվյալներով** կազմել է **1093**, իսկ 2023 թվականին՝ **1204**: Սա նշանակում է, որ 2023 թվականին «Մետաղական ամրան» ապրանքային շուկան, ըստ ներմուծման, ունեցել է կենտրոնացվածության միջին մակարդակ: Միևնույն ժամանակ 2022 թվականին Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը «Մետաղական ամրան» ապրանքային շուկայի **իրացման տվյալներով** կազմել է **2151**, իսկ 2023 թվականին՝ **2010**: Սա նշանակում է, որ Դիտարկվող ժամանակահատվածում «Մետաղական ամրան» ապրանքային շուկան, ըստ իրացման, ունեցել է կենտրոնացվածության բարձր մակարդակ:

5. 2023 թվականին ամրանի ներմուծման աշխարհագրության կառուցվածքում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել, մասնավորապես՝ ներմուծված ամրանի **90 տոկոսը** 2023 թվականին ձեռք է բերվել Իրանից (նախկին 76 տոկոսի փոխարեն), մնացյալ մասը՝ Ռուսաստանից: Սա կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Դիտարկվող ժամանակահատվածում Իրանից մետաղական ամրանների ձեռքբերման միջին գները համեմատաբար ավելի ցածր են եղել, քան այլ երկրներից ներմուծած մետաղական ամրանների միջին գները:

6. ՀՀ-ում ամրանների արտադրություն Դիտարկվող ժամանակահատվածում իրականացրել է «Ասկե Գրուպ» բաց բաժնետիրական ընկերությունը: 2023 թվականին 2022 թվականի համեմատ ամրանների արտադրության ծավալը աճել է **18 տոկոսով՝ կազմելով շուրջ 105 հազար տոննա:** «Ասկե Գրուպ» ընկերությունը արտադրված ամրանները գրեթե ամբողջապես իրացնում է «Միկմետալ» փակ

բաժնետիրական ընկերությանը, որի միջոցով իրականացվում է ՀՀ-ում արտադրված ամրանների իրացումը ՀՀ տարածքում:

7. Ամրանների արտադրության գործընթացը բաղկացած է երկու հիմնական փուլերից՝ (1) նախապատրաստվածքի արտադրություն և (2) նախապատրաստվածքից ամրանի արտադրություն:

8. Նախապատրաստվածքի ինքնարժեքի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ծախսերի շուրջ **տոկոսը** բաժին է ընկնում նյութածախսին՝ շուրջ տոկոսը կազմում է սև մետաղի ջարդոնը, շուրջ տոկոսը՝ կիր, ֆերրոսիլիկոմանգան, ֆերրոսիլիցիում և այլ նյութեր: Նախապատրաստվածքի արտադրության ինքնարժեքի շուրջ **տոկոսը** կազմում են էներգակիրներին ուղղված ծախսերը:

9. 2023 թվականին ամրանի արտադրության ինքնարժեքի տոկոսը կազմել է նյութածախսը (այդ թվում՝ սև մետաղի ջարդոնը՝ տոկոս), տոկոսը՝ էներգակիրները, տոկոսը՝ ֆինանսական ծախսերը, տոկոսը՝ աշխատավարձը, տոկոսը՝ մաշվածքը և տոկոսը՝ այլ ծախսերը:

10. 2023 թվականին մետաղական ամրանների իրացման ծավալը աճել է **շուրջ 26 տոկոսով** և կազմել է 261 հազար տոննա: Ամրանների իրացման շուկայում առավել մեծ մասնաբաժին է ունեցել «Ասկե Գրուպ» ընկերությունը: 2023 թվականին՝ **տոկոս**:

11. Հայկական արտադրության մետաղական ամրանների մեծածախ իրացման գները Դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում **12-13 տոկոսով** ավելի բարձր են եղել, քան ներմուծված մետաղական ամրանների իրացման միջին գները:

12. 2022 թվականին ՀՀ-ում իրացված մետաղական ամրանների **տոկոսը** կազմել են հայկական արտադրության մետաղական ամրանները, իսկ 2023 թվականին՝ իրացված մետաղական ամրանների **տոկոսը**:

13. Հաշվի առնելով Իրանում մետաղական ամրանների արտադրության և արտահանման պետական աջակցության ծրագրերի առկայությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ իրանական արտադրության մետաղական ամրանների գները ավելի ցածր են, քան հայկական արտադրության մետաղական ամրանների գները, ուստի Հանձնաժողովի կողմից իրականացվել է վերլուծություն, թե այլ հավասար պայմաններում, որքան է կազմում Իրանում արտադրված մետաղական ամրանների միջին ինքնարժեքը: Իրականացված վերլուծության տվյալների համաձայն՝ արտադրության փուլում միայն **էլեկտրաէներգիայի և գազի սպառման ծախսերի** առումով ՀՀ-ում և Իրանում առկա է **29 042 դրամ**, իսկ **աշխատավարձին ուղղված ծախսերի դեպում՝ 2 763 դրամ** տարբերություն՝ 1

տոննա մետաղական ամրանի ինքնարժեքը ձևավորող բաղադրիչների բացվածքում:

14. ՀՀ արտադրության մետաղական ամրանների՝ արտադրությունից մինչև վերջնական իրացման փուլի եկամտաբերությունը (այն է՝ «Ասկե Գրուպ» և «Միկմետալ» ընկերությունների միջին եկամտաբերությունների գումար)՝ ըստ ինքնարժեքի կազմել է՝ 2023 թվականին՝ **տոկոս**, իսկ 2022 թվականին՝ **տոկոս**: Իրանական արտադրության մետաղական ամրանների ՀՀ-ում իրացման դեպքում միջին հաշվարկային եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի, 2023 թվականին միջինում կազմել է առնվազն **տոկոս**: Այսպիսով ստացվում է, որ չնայած 2023 թվականին հայկական արտադրության մետաղական ամրանների իրացման եկամտաբերությունը՝ ըստ ինքնարժեքի **առնվազն 8 տոկոսով** ավելի ցածր է եղել, քան իրանական արտադրության մետաղական ամրաններինը, ՀՀ շուկայում իրացվող հայկական արտադրության մետաղական ամրանների գները այնուամենայնիվ ավելի բարձր են եղել իրանական արտադրության մետաղական ամրանների իրացման գներից:

15. Իրանական ծագման մետաղական ամրանների իրացման միջին կշռված գները հայկական արտադրության մետաղական ամրանների գներից միջինում 2022 թվականին ցածր են եղել մոտ **22 հազար դրամի չափով** (-6 տոկոս), իսկ 2023 թվականին միջինում՝ **10 հազար դրամի չափով** (-4 տոկոս): Իրանական և հայկական արտադրության մետաղական ամրանների միջին իրացման գների տարբերությունը ըստ առանձին տնտեսավարող սուբյեկտների 2022 թվականին որոշ դեպքերում հասնում է մինչև **տոկոս** (ավելի քան **դրամ**), իսկ 2023 թվականին՝ **տոկոս** (ավելի քան **դրամ**):

16. ՌԴ և ՀՀ արտադրված մետաղական ամրանների իրացման միջին գների տարբերությունը 2023 թվականին 2022 թվականի համեմատ նվազել է: Այն դեպքում, երբ 2022 թվականին ՌԴ ծագում ունեցող մետաղական ամրանները ՀՀ-ում իրացվել են շուրջ 33 600 դրամ ավելի բարձր գնով, քան հայկականը, ապա 2023 թվականին տարբերությունը կազմել է շուրջ 6 900 դրամ:

17. Շինարարության ծավալի 2021-2024 թվականների տարեկան միջին արժեքը գերազանցել է 2009-2020 թվականների տարեկան միջին արժեքին **շուրջ 35 տոկոսով**: 2023-2024 թվականներին շինարարության ծավալների աճով պայմանավորված աճել են նաև մետաղական ամրանների սպառման ծավալները:

18. ՀՀ-ում մետաղական վերջնական արտադրատեսակների արտադրության ծավալը 2024 թվականին **85 տոկոսով** գերազանցել է 2020 թվականի ծավալը (2024 թվականին ՀՀ-ում արտադրվել է 89 հազար տոննա մետաղական ամրան և պողպատե աղացող գունդ, իսկ 2020 թվականին՝ 48 հազար տոննա):

19. Տնտեսավարող սուբյեկտների՝ մետաղական պատրաստի արտադրանք և կիսապատրաստուկ ստանալու առավելագույն տարեկան գնահատված ցուցանիշը կազմում է մոտ **335 հազար տոննա**, այն պարագայում, երբ վերջին հինգ տարիների ընթացքում մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի նկատմամբ առկա միջին պահանջարկը կազմել է մոտ **223 հազար տոննա**:

Իրավական կարգավորումների վերաբերյալ.

1. Կառավարության թիվ 607-Ն որոշմամբ հաստատված Տեխնիկական կանոնակարգով մանրամասն կարգավորվում են մետաղական ամրաններին ներկայացվող մեխանիկական, տեխնիկական և քիմիական պահանջները, շրջանառության դուրսբերմանը, փաթեթավորմանը, փոխադրմանը, մակնշմանը և չափումների միասնականությանը ներկայացվող պահանջները:

2. ԵՏՀԽ թիվ 80 որոշման Ապրանքների մաքսային սակագների ցանկով Ապրանքների ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանվել է 5 %:

Մինչդեռ, նախքան Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելը, Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 102-րդ հոդվածով մետաղական ամրանների ներմուծման և արտահանման համար կիրառվել է 0 % մաքսատուրք, իսկ 110-րդ հոդվածով՝ գանձվել է մաքսավճար:

3. Սև մետաղի և սև մետաղի ջարդոնների արտահանման արգելքին զուգահեռ «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված փոփոխություններով և լրացումներով սև մետաղի և սև մետաղի ջարդոններից արտադրվող նախապատրաստվածքների արտահանման լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար սահմանվել է պետական տուրք՝ 1 տոննայի դիմաց բազային տուրքի 110-ապատիկի չափով:

Բացահայտված խնդիրներ և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ.

1. Տեխնիկական կանոնակարգի գործողությունը տարածվում է, ի թիվս այլնի՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային ծածկագրերին համապատասխան հետևյալ պողպատե արտադրանքների վրա՝ **ամրանային ձողեր՝ բեկոնի ամրանավորման համար օգտագործվող, ածխածնային պողպատից, շիկազլոցված՝ 7214 99-ից**: Միաժամանակ իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծված մետաղական ամրանների 98 տոկոսը դասակարգված են եղել **ԱՏԳ ԱԱ 7214 20 կոդի ներքո**: Այս առումով առաջարկում ենք.

➤ **Այն դեպքում, եթե Տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրի ապրանքատեսակների վրա, և բեկոնի ամրանավորման համար օգտագործվող ամրանները չեն կարող**

ներմուծվել այլ ծածկագրերի ներքո, ուժեղացնել սահմանային վերահսկողությունն այնպես, որպեսզի բացառվեն ռիսկերն առ այն, որ փոփոխական սուբյեկտները հեփաֆա սփուգումներից խուսափելու կամ այլ նպատակներից ելնելով ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրին համարժեք ապրանքատեսակները ներմուծեն ԱՏԳ ԱԱ 7214 ծածկագրի վեցանիշ որևէ այլ բացվածքի ներքո:

➤ Այն դեպքում, եթե ԱՏԳ ԱԱ 7214 20 և ԱՏԳ ԱԱ 7214 99 ծածկագրերի ներքո դասվող ապրանքատեսակները կարող են ունենալ կիրառման նույն նշանակությունը և օգտագործման ոլորտը, ապա դիտարկել Տեխնիկական կանոնակարգի պահանջների փարածումը ԱՏԳ ԱԱ 7214 քառանիշ ծածկագրի այլ բացվածքների նկատմամբ ևս (հաշվի առնելով կիրառման նույն նշանակություն ունենալը), որպեսզի ոլորտում համանման գործունեություն իրականացնող փոփոխական սուբյեկտների և համանման ապրանքների ներմուծման և շրջանառության հավասար պահանջներ ու մրցակցային պայմաններ ապահովվեն:

3. Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ՀՀ-ում իրացվող հայկական արտադրության մետաղական ամրանների ինչպես իրացման գները, այնպես էլ արտադրության ինքնարժեքը ավելի բարձր է, քան իրանական արտադրության մետաղական ամրանների իրացման միջին գները և համապատասխանաբար՝ ինքնարժեքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա կարող է պայմանավորված լինել Իրանում մետաղական ամրանների արտադրության և արտահանման խրախուսմանն ուղղված պետական աջակցության ծրագրերով, ՀՀ-ում արտադրվող մետաղական ամրանների և իրանական արտադրության մետաղական ամրանների միջև հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով առաջարկվում է.

➤ քննարկման առարկա դարձնել ներքին շուկայի պաշտպանության միջոցառման կիրառման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը, որպեսզի Իրանում մետաղական ամրանների արտադրության և արտահանման խրախուսմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի կիրառման պայմաններում, ՀՀ-ում արտադրվող մետաղական ամրանների և իրանական արտադրության մետաղական ամրանների իրացման համար ապահովվեն հավասար մրցակցային պայմաններ:

4. Մետաղական վերջնական պատրաստի արտադրանքի խթանմանն ուղղված քաղաքականության և շուկայում նոր տնտեսավարող սուբյեկտների ավելացմանը զուգընթաց ավելանում է նաև մետաղական վերջնական արտադրատեսակների առաջարկը ՀՀ շուկայում: Մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտների՝ մետաղական պատրաստի արտադրանք և կիսապատրաստուկ ստանալու առավելագույն տարեկան ցուցանիշը կազմում է

մոտ **335 հազար տոննա**, այն պարագայում, երբ վերջին հինգ տարիների ընթացքում մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի նկատմամբ առկա միջին պահանջարկը կազմել է մոտ **223 հազար տոննա**: Նշվածը կարող է հանգեցնել տեղական հումքի արագ սպառման և մետաղական պատրաստի վերջնական արտադրանքի ավելցուկային շուկայի ստեղծման, ինչի առնչությամբ առաջարկվում է.

➤ ***դիտարկել համապատասխան միջոցառումների կիրառման հնարավորությունը, որպեսզի ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտները խուսափեն ավելցուկային շուկայում հայտնվելու ռիսկից, միևնույն ժամանակ նվազեցնելով նաև տեղական հումքի արագ սպառման ռիսկը:***